Strasbourg, 5 November 2009

ACFC/SR/III(2009)010
/Armenian language version/

THIRD REPORT SUBMITTED BY ARMENIA PURSUANT TO ARTICLE 25, PARAGRAPH 1 OF THE FRAMEWORK CONVENTION FOR THE PROTECTION OF NATIONAL MINORITIES

(Received on 5 November 2009)

Եվրոպայի խորհրդի «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության երրորդ զեկույց

Ներածություն

1. Եվրոպայի Խորհրդի «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի (այսուհետ՝ Շրջանակային կոնվենցիա) 25-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը ներկայացնում է նշված կոնվենցիայի կատարման վերաբերյալ երրորդ պարբերական զեկույցը:

2. Զեկույցը ներառում է տեղեկատվություն կոնվենցիայի դրույթների կատարման ուղղությամբ 2004-2009թթ. ընկած ժամանակահատվածում ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի (97) 10 բանաձ–ի 21-րդ կետի:

3. Զեկույցը մշակվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. նոյեմբերի 23-ի թիվ 1483-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության ազգային զեկույցների պատրաստման – հաստատման կարգին համապատասխան:

4. Վերոհիշյալ կարգին համապատասխան՝ զեկույցի պատրաստման նպատակով ստեղծվել է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որում ընդգրկված են հետ–յալ մարմինների ներկայացուցիչները.
   - Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն,
   - Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն,
   - Հայաստանի Հանրապետության կրթության – գիտության նախարարություն,
   - Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն,
   - Հայաստանի Հանրապետության ոստիկանություն,
   - Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմ,
   - Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով,
   - Հայաստանի Հանրապետության կառավարություն,
   - Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն,
   - Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության – ռադիոյի ազգային հանձնաժողով,
   - Եր–անի քաղաքապետարան,
   - Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ
   - Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համակարգող խորհուրդ:

   Աշխատանքային խումբը զեկույցը մշակելիս համագործակցել է ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների հետ: Զեկույցի նախագիծը քննարկվել է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների – հասարակական կազմակերպությունների հետ 2009թ. հոկտեմբերին կայացած կլոր սեղան քննարկման ժամանակ:

5. Զեկույցը հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ 2009թ. հոկտեմբերի 29-ին:

6. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Մարդու իրավունքների զեկուցող խմբի կողմից սահմանված ձ–աչափին համապատասխան (GR-H(2008) 11rev)՝

զեկույցում ներառված է տեղեկատվություն նախորդ զեկույցի արդյունքների հիման վրա ազգային մակարդակով ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ (Բաժին 1) – Շրջանակային կոնվենցիայի կատարման վերաբերյալ (Բաժին 2):

Բաժին 1
Շրջանակային կոնվենցիայի կատարման 2-րդ մոնիտորինգային փուլի արդյունքներն ամփոփող ազգային մակարդակով իրականացված գործնական քայլերը

7. Շրջանակային կոնվենցիան՝ կից փաստաթղթերով, ինչպես նա– ազգային փոքրամասնությունների իրավունքների, մշակույթի – լեզվի պաշտպանությանն ուղղված մի շարք այլ փաստաթղթեր հայերեն լեզվով տեղակայվել են Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական կայքում (http://www.gov.am/am/staff-structure/info/74/):

8. 2008թ. ԵԱՀԿ եր–անյան գրասենյակը, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության – կառավարության կրոնի – ազգային փոքրամասնությունների վարչության հետ համագործակցությամբ, նախաձեռնել է ազգային փոքրամասնությունների իրավունքներին, ինչպես նա– կրոնի, խղճի – դավանանքի ազատությանն առնչվող միջազգային իրավական փաստաթղթերի (ՄԱԿ, ԵԽ – ԵԱՀԿ) – Հայաստանի Հանրապետության օրենսդրական ակտերի ժողովածուի (հայերեն – ռուսերեն) հրատարակման գործընթացը: Գործընթացն իր վերջնական փուլում է, – նախատեսվում է, որ ժողովածուն լույս կտեսնի 2009թ. ընթացքում: Այն կար–որվում է ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար իրենց իրավունքների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման առումով, ինչպես նա– Հայաստանի Հանրապետության համապատասխան պետական մարմինների համար կիրառական նշանակության տեսանկյունից:

9. Հայաստանի Հանրապետության մարզպետարանների – Եր–անի քաղաքապետարանի ներկայացուցիչների հետ քննարկվել է ազգային փոքրամասնությունների – կրոնական կազմակերպությունների վերաբերյալ օրենքով ամրագրված քաղաքականությունը, մասնավորապես ներկայացվել են Շրջանակային կոնվենցիան՝ բացատրական զեկույցով, – «Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիան» (այսուհետ՝ Խարտիա): Էլեկտրոնային կրիչի վրա նրանց տրամադրվել է ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող միջազգային – ազգային օրենքների ժողովածուն ներկայացնող մեկական փաթեթ, ինչպես նա– Եվրոպայի խորհրդի համապատասխան փորձագիտական կոմիտեների կարծիքները Հայաստանի Հանրապետության կողմից վերոհիշյալ կոնվենցիայի – Խարտիայի ներդրման ընթացքի վերաբերյալ:

10. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ միասին կազմակերպվել – 2007թ.. նոյեմբերի 13-ին անց է կացվել Շրջանակային կոնվենցիայի՝ Հայաստանում ներդրման ընթացքի շուրջ ամփոփիչ քննարկում, որին մասնակցել են Եվրոպայի խորհրդի՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների գծով փորձագետներ, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների, մարզպետարանների, ազգային փոքրամասնությունների, շահագրգիռ հասարակական այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ, թվով՝ շուրջ 80 մարդ:

11. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ միասին կազմակերպվել – 2007թ. նոյեմբերի 14-15-ին անց է կացվել միջազգային խորհրդաժողով՝ նվիրված Շրջանակային կոնվենցիայի ներդրման ընթացքի խնդիրներին: Մասնակցել են Եվրոպայի խորհրդի՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների – Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների Եվրոպական խարտիայի գծով փորձագետներ, Հունգարիայի, Ռումինիայի, Վրաստանի, Ռուսաստանի ներկայացուցիչներ, միջազգային – տեղական փորձագետներ :

12. 2006թ. նոյեմբերի 4-5 Ծաղկաձոր քաղաքում տեղի է ունեցել սեմինար, որին մասնակցել են Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ղեկավարները: Սեմինարի ընթացքում ի թիվս ազգային փոքրամասնություններին հուզող շատ հարցերի քննարկվել է նա– Շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտեի Հայաստանի վերաբերյալ 2-րդ կարծիքը: Քննարկման արդյունքները ներառվել են Հայաստանի Հանրապետության մեկնաբանությունների մեջ, որոնք –ս քննարկվել են ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների հետ:

13. ԵԱՀԿ եր–անյան գրասենյակի – Համաշխարհային անկախ երիտասարդական միավորման նախաձեռնությամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության ազգային փոքրամասնությունների – կրոնի հարցերի վարչության աջակցությամբ 2008թ. հուլիսի 29-ին մեկնարկել են վերապատրաստման մեկշաբաթյա դասընթացներ Հայաստանի ազգային փոքրամասնությունների երիտասարդության շրջանում առաջնորդների կարողությունների զարգացման – խորացման նպատակով: Այս դասընթացը ԵԱՀԿ գրասենյակի – վարչության հետ համատեղ մշակած հանդուրժողականության վերաբերյալ ծրագրի մի մասն է: Դասընթացների ընթացքում ազգային փոքրամասնությունների երիտասարդ ներկայացուցիչներին բաժանվել են «Ազգային փոքրամասնությունները Հայաստանում (պարտավորություններ. հնարավորություններ)» գրքույկը, որտեղ զետեղված են Շրջանակային կոնվենցիան – այլ փաստաթղթեր: Լուսաբանվել է Շրջանակային կոնվենցիան – քննարկվել են ազգային փոքրամասնությունների երիտասարդ ներկայացուցիչներին հուզող խնդիրները:

14. Երկրորդ ազգային զեկույցի արդյունքները պաշտոնապես չեն թարգմանվել – հրապարակվել ազգային փոքրամասնությունների լեզուներով, սակայն այն տարածելու նպատակով, Հայաստանի Հանրապետության կառավարության ազգային փոքրմասնությունների – կրոնի հարցերի վարչության աշխատակիցները հաճախակի այցելում են ազգային փոքրմասնությունների բնակավայրեր, հանդիպում են Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, համայնքապետերի, դպրոցների տնօրենների հետ – էլեկտրոնային կրիչի վրա կամ այլ տարբերակով նրանց տրամադրում են Շրջանակային կոնվենցիայի – դրա հետ կապված բոլոր փաստաթղթերի հայերեն – ռուսերեն տարբերակները: Դպրոցների տնօրեններին խնդրվել է դասղեկներին հորդորել բաց դասեր կազմակերպել կամ դասղեկի ժամեր հատկացնել՝ աշակերտներին փաստաթղթի փաթեթին աստիճանաբար ծանոթացնելու նպատակով: Համայնքներում հանդիպումներ են տեղի ունեցել նա– ազգային փոքրամասնությունների լեզուն դասավանդող ուսուցիչների, ինչպես նա– դպրոցի մյուս մանկավարժների, աշակերտների – ծնողների հետ:

Հանդիպումների ընթացքում բաժանվել են «Ազգային փոքրամասնությունները Հայաստանում (պարտավորություններ. հնարավորություններ)» գրքույկը:

15. Հայաստանի Հանրապետության կառավարության ազգային փոքրամասնությունների – կրոնի հարցերի վարչության կողմից առաջարկություններ են մշակվել – ուղարկվել Հայաստանի Հանրապետության մշակույթի, Հայաստանի Հանրապետության սպորտի – երիտասարդության – Հայաստանի Հանրապետության կրթության – գիտության նախարարություններին – ազգային փոքրամասնությունների կոմպակտ բնակության վայրեր ունեցող Հայաստանի Հանրապետության մարզպետարաններին, որպեսզի իրենց պաշտոնական կայքերում տեղակայեն ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային պայմանագրերը՝ կից փաստաթղթերով, ինչպես նա– իրենց կողմից ոլորտում իրականացված համապատասխան միջոցառումներն ու ծրագրերը:

16. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ինտերնետային www.mincult.am կայքի «Հասարակական կազմակերպություններ» բաժնում առանձին էլեկտրոնային էջ է տրամադրված Հայաստանում գործող ազգային փոքրամասնությունների միությունների գործունեությանը – տեղեկույթ՝ մշակութային համագործակցության ուղղությունների, համատեղ իրականացվող ծրագրերի ու միջոցառումների վերաբերյալ: Ներկայումս (2009թ. սեպտեմբեր) Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունում աշխատանքներ են տարվում մշակույթի ինտերնետային պորտալի ստեղծման ուղղությամբ, որտեղ նախատեսվում է առանձին ինտերնետային կայք տրամադրել Հայաստանի Հանրապետությունում բնակավող ազգային փոքրամասնությունների մշակույթի լուսաբանմանը, իրականացվող պետական – մարզային ծրագրերին ու միջոցառումներին, նրանց վերաբերող մշակույթի ոլորտի իրավական ակտերին – միջազգային փաստաթղթերին:

Բաժին 2
Շրջանակային կոնվենցիայի կատարմանն ուղղված միջոցառումներ

ա) Նախարարների կոմիտեի կողմից ընդունված բանաձ–ի CM/ResCMN(2007)5 (986-րդ հանդիպում, 07.02.2009թ.) կատարմանն ուղղված միջոցառումներ

1. Նախարարների կոմիտեի կողմից ընդունված բանաձ–ի CM/ResCMN(2007)5 1 b) կետով նախատեսված եզրակացությունների կատարման վերաբերյալ

17. Ազգային փոքրամասնություններին պետական բյուջեից տրվող ֆինանսական աջակցության վերաբերյալ հայտնում ենք, որ ֆինանսական աջակցության չափն աճում է ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացմանը համեմատ: Այս պահին, տնտեսական ճգնաժամով պայմանավորված, ֆինանսական աջակցության չափը դեռ–ս հնարավոր չէ ավելացնել նախորդ տարվա համեմատ: Հարկ է նշել, որ չնայած ճգնաժամին, ազգային փոքրամասնությունների կրթամշակութային ծրագրերը շարունակում են անխափան իրականացվել:

18. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը տրամադրել է մարդահամարի արդյունքների վրա հիմնված Հայաստանի Հանրապետության բնակչության կազմը՝ ըստ ազգությունների,

քաղաքային/գյուղական բաշխումով, որը ներկայացված է սույն զեկույցի Հավելված 1-ում: Էթնիկ կազմի նշանակալի փոփոխություններ են տեղի ունեցել քաղաքական, տնտեսական – սոցիալական ոլորտներում տեղի ունեցած զարգացումների հետ–անք հանդիսացող միգրացիոն գործընթացների արդյունքում: Հավելված 2-ը ներկայացնում է նա– 2002-2008թթ. ժամանակահատվածում միգրացիոն տեղաշարժերի պատկերը – կենդանի ծնվածների ու մահացածների բաշխումը՝ ըստ ազգային պատկանելության:

19. «Հեռուստատեսության – ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը հեռուստառադիոհաղորդումների լեզվի նկատմամբ թե– սահմանում է մի շարք սահմանափակումներ, սակայն դրանք չեն տարածվում ազգային փոքրամասնությունների լեզուների վրա: Բացի այդ, «Հեռուստատեսության – ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածում 2008թ. դեկտեմբերի 26-ին կատարվել է փոփոխություն, որով հանրային հեռուստաընկերության համար նախատեսում է պարտավորություն հեռուստալսարանին մատուցել այնպիսի հաղորդումներ, որոնցում հաշվի են առնվում ազգային փոքրամասնությունների շահերը, ինչպես նա– հանրային հեռուստաընկերությամբ հեռարձակել ազգային փոքրամասնությունների լեզուներով հաղորդումներ շաբաթվա ընթացքում՝ մինչ– երկու ժամ տ–ողությամբ:

20. «Այլէթնիկ քաղաքացիների – էթնիկ փոքրամասնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների մասին օրենքի մշակման երրորդ փորձն էր: Նախագծի վերաբերյալ քննարկումների ամփոփումը մնաց անավարտ՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մի մասի կողմից նախագծի սուր քննադատության – մյուս մասի կողմից հետաքրքրության նվազման պատճառով:

21. Հայտնի է, որ չնայած Հայաստանում ազգային փոքրամասնությունների համայնքների քանակապես համեմատաբար մեծ թվին, դրանց պատկանող անձանց թիվը բավական փոքր է, որը հնարավորություն չի տալիս նրանց անգամ կոմպակտ բնակության վայրերից սեփական պատգամավոր ունենալ: Սրանով է պայմանավորված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում նրանց ներկայացուցչի բացակայությունը: Մյուս կողմից ազգային փոքրամասնության ներկայացուցիչներն ունեն հավասար իրավունք մասնակցելու քաղաքական կուսակցությունների կյանքին – ստեղծելու իրենց քաղաքական կուսակցությունները: Այդ իրավունքներից օգտվելու հնարավորությունների իրականացումը կախված է նախ – առաջ հենց իրենց շահագրգռվածությունից – հմտություններից:

22. Ինչ վերաբերում է գործադիր մարմիններում – տեղական մակարդակում նրանց ներգրավմանը, ապա այդ գործընթացն իրագործվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում՝ առանց որ–է խտրականության: Արդյունքում օրենքի պահաջներին բավարարող ազգային փոքրամասնությանը պատկանող քաղաքացիները ծառայության են անցնում գործադիր իշխանության տարբեր մարմիններում: Կոմպակտ բնակության վայրերում նրանք նույնպես ներգրավվում են տարածքային կառավարման – տեղական ինքնակառավարման մարմիններում:

23. Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների – կրոնի հարցերի վարչությունը շարունակ

հանդիպումներ է ունենում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների, համայնքների – հասարակական կազմակերպությունների հետ՝ քննարկում նրանց իրավիճակի, հուզող խնդիրների, իրավունքների իրացման հետ կապված հարցերը: Հայաստանի Հանրապետության մշակույթի, Հայաստանի Հանրապետության կրթության – գիտության – Հայաստանի Հանրապետության սպորտի – երիտասարդության հարցերի նախարարությունները ներգրավում են ազգային փոքրամասնություններին իրենց նախատեսած ծրագրերում, վերջիններիս հետ կապված խնդիրները լուծելիս՝ խորհրդակցում նրանց հետ:

2. Նախարաների կոմիտեի կողմից ընդունված բանաձ–ի CM/ResCMN(2007)5 2-րդ կետով նախատեսված հանձնարարականների կատարման վերաբերյալ

- *հանրության, քաղաքական գործիչների – լրատվամիջոցների շրջանում ավելացնել իրազեկումը ազգային փոքրամասնությունների վերաբերյալ,*

24. Հայաստանի Հանրապետության կառավարության ազգային փոքրամասնությունների – կրոնի հարցերի վարչությունը հետ–ողականորեն աշխատում է հասարակության տարբեր շերտերում ազգային փոքրամասնությունների վերաբերյալ իրազեկման բարձրացման ուղղությամբ: Պարբերաբար հանդիպումներ են տեղի ունենում Հայաստանի Հանրապետյության տարբեր գերատեչությունների ղեկավարների, նախարարների հետ, ինչպես նա– մամուլի ասուլիսներ տարբեր ակումբներում: Լրատավամիջոցներից շատերն իրենք են շահագրգիռ ազգային փոքրամասնությունների խնդիրները – մշակութային կյանքը լուսաբանելու առումով. դրանցից են «Առավոտ», «Ազգ», «Երկիր», «Հետք» – այլ տպագիր – ինտերնետային թերթեր: «Հայոց աշխարհ» օրաթերթի խմբագրության հետ համաձայնություն է ձեռք բերվել թերթի շրջանակներում պարբերաբար ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքում ապրող ազգային փոքրամասնությունների մասին տեղեկատվություն:

- *միջոցներ գտնել բարձրացնելու փոքրամասնությունների մասնակցությունը լրատվամիջոցներին – վերացնել իրավական խոչընդոտները հանրային ռադիոյով – հեռուստատեսությամբ փոքրամասնությունների լեզուներով հեռարձակումների համար,*

25. Տե՛ս զեկուցի 19-րդ կետը:

- *շարունակել աջակցել ազգային փոքրամասնությունների հետ խորհրդակցական մեխանիզմներին՝ հաշվի առնելով նրանց բազմազանությունը,*

26. Ազգային փոքրամասնությունների հետ խորհրդակցական մարմին է հանդիսանում Հայաստանի Հանրապետության Նախագահի խորհրդականին կից Ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համակարգող խորհրդը (այսուհետ՝ Համակարգող

խորհուրդ), որը ստեղծվել է 2000թ. մարտին Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների ազգային-մշակութային կազմակերպությունների համագումարի արդյունքում: Ելնելով Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների պաշտպանվածությունն ապահովելու, նրանց միջհամայնքային հարաբերություններն ակտիվացնելու, ինչպես նա– հատուկ կրթամշակութային, իրավական – այլ խնդիրների նկատմամբ պետական հոգածությունն առավել արդյունավետ դարձնելու անհրաժեշտությունից՝ 2000թ. հունիսի 15-ին Հայաստանի Հանրապետության Նախագահն իր կարգադրությամբ հավանություն տվեց Համակարգող խորհրդի ստեղծմանը:

27. Համակարգող խորհրդի անդամները ընտրվում են հետ–յալ կերպ. Հայաստանի Հանրապետությունում առկա 11 ազգային փոքամասնություններից առաջադրվել են երկուական ներկայացուցիչ, որոնք ներկայացնում են յուրաքանչյուր համայնքի տարբեր կազմակերպություններ: Եթե համայնքն ունի մեկ հասարակական կազմակերպություն, ապա երկու անդամն էլ ընտրվում են տվյալ կազմակերպությունից, իսկ եթե համայնքում առկա են երկու կամ ավելի հասարակական կազմակերպություններ, ապա Համակարգող խորհրդի անդամներ են ընտրվում այդ համայնքը ներկայացնող տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից: Այսպիսով, Համակարգող խորհուրդն ունի 22 անդամ: Այն խորհրդատվական մարմին է – իր գործունեությունն իրականացնում է Համակարգող խորհրդի կողմից հաստատված աշխատակարգին համապատասխան՝ նիստերի միջոցով:

28. Համակարգող խորհրդի հիմնական գործառույթներն են.
- ազգային փոքրամասնությունների իրավունքների – ազատությունների աջակցությունն ու պաշտպանությունը,
- ազգային փոքրամասնությունների իրավունքներին առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ առաջարկությունների նախապատրաստումը,
- ազգային փոքրամասնությունների իրավունքների – ազատությունների առնչությամբ իրավական ակտերի նախագծերի քննարկումը, վերլուծությունը – առաջարկությունների պատրաստումը,
- ազգային փոքրամասնությունների կրթական-մշակութային ծրագրերին առնչվող հարցերի քննարկումը:

29. Համակարգող խորհրդի նիստերում քննարկվում են Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային փաստաթղթեր, որոնց մասին Խորհրդի անդամները տեղյակ են պահում ազգային փոքրամասնությունների համայնքների լայն շրջանակներին:

30. 2000թ. Համակարգող խորհրդի առաջարկությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ազգային փոքրամասնությունների կրթական-մշակութային գործունեությանը նպաստելու նպատակով տարեկան 10 միլիոն դրամ է հատկացվում Խորհրդի անդամ հանդիսացող 11 համայնքները ներկայացնող կազմակերպություններին: 2000թ. ի վեր պետական բյուջեն ծրագրվում է այդ գումարի ներառումով: Յուրաքանչյուր տարվա վերջում այդ կազմակերպությունների ներկայացուցիչները միջոցառումների պլանային – ծախսային տեղեկատվություն են ներկայացնում Համակարգող խորհրդին – Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

31. Յուրաքանչյուր տարվա սկզբում Համակարգող խորհրդի նիստում քննարկվում – հաստատվում է միասնական միջոցառումների ցանկը: Միջոցառումներին

մասնակցում են Համակարգող խորհրդում ներկայացված առկա 11 ազգությունների ներկայացուցիչները: Բացի այդ յուրաքանչյուր համայնք իր ազգային տոներին հրավիրում է մնացած բոլոր էթնիկ համայնքների ներկայացուցիչներին: Այսպիսով, միասնաբար նշվում են ինչպես Հայաստանի Հանրապետության պետական, այնպես էլ առանձին-առանձին էթնիկ փոքրամասնությունների ազգային տոները, կազմակերպվում են համաժողովներ – սեմինարներ, արշավներ՝ Հայաստանի պատմական վայրերին ծանոթանալու նպատակով, համերգներ, ընթերցումներ, այս կամ այն ազգության ականավոր գործչին նվիրված երեկոներ – այլն:

32. 2006թ. Համակարգող խորհրդի համակարգողի միջամտությամբ Համակարգող խորհրդի անդամների ներկայացմամբ ձ–ավորվել է Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների երիտասարդական ջոկատ, որն այդ տարվանից սկսած պարբերաբար փոփոխված կազմով մասնակցում է «Բազե» համահայկական երիտասարդական հավաքին: Ջոկատի մասնակցությունը իր ինքնատիպությամբ մեծ հետաքրքրություն է առաջացրել – ջերմ վերաբերմունքի արժանացել:

33. Այս ամենը թույլ է տալիս Հայաստանի Հանրապետության տարածքում բնակվող ազգային փոքրամասնություններին ծանոթանալ միմյանց լեզվին, ավանդույթներին, սովորույթներին, ծիսակատարություններին, ինչն իր հերթին փոխընբռման, հանդուրժողականության մթնոլորտ է ձ–ավորում – նպաստում մշակույթների փոխթափանցմանն ու հարստացմանը:

34. 2007թ. ՀՀ Նախագահի խորհրդականի նախաձեռնությամբ – Համակարգող խորհրդի որոշմամբ նկարահանվեց ֆիլմաշար՝ նվիրված Հայաստանում բնակվող բոլոր ազգային փոքրամասնություններին: Նկարահանման օպերատորն էր Համակարգող խորհրդի անդամ, լեհական համայնքը ներկայացնող Գուրգեն Գադաչիկը: Ֆիլմաշարը հեռարձակվել է Հանրային հեռուստաընկերության Հ1 հեռուստաալիքով:

35. 2006թ. նոյեմբերի 4-5 Ծաղկաձորում Համակարգող խորհրդի նախաձեռնությամբ – ՀՀ Նախագանի աջակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության ազգային փոքրամասնությունների – կրոնի հարցերի վարչության հետ համատեղ տեղի է ունեցել սեմինար Շրջանակային կոնվենցիայի, դրա կատարման վերաբերյալ Հայաստանի մասին Խորհրդատվական կոմիտեի երկրորդ կարծիքի, Եվրոպական խարտիայի – «Ազգային փոքրամասնությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ: Սեմինարին մասնակցում էին Համակարգող խորհրդի անդամները, ազգային-մշակութային կազմակերպությունների նախագահները, ներկայացուցիչներ Հայաստանի Հանրապետության կրթության – գիտության, Հայաստանի Հանրապետության արդարադատության, Հայաստանի Հանրապետության մշակույթի – երիտասարդության հարցերի նախարարություններից, Լեզվի պետական տեսչությունից, Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդից, ԵԱՀԿ-ից, Եվրոպայի խորհրդի եր–անյան գրասենյակից, Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից – քննարկվող հարցերի հետ առնչվող այլ անձինք:

36. Պետք է նշել, որ Համակարգող խորհուրդը նա– ակտիվ մասնակցություն է ցուցաբերում երկրի քաղաքական – հասարակական կյանքում: Նրա անդամների նախաձեռնությամբ – ազգային փոքրամասնությունների համայնքների մյուս ներկայացուցիչների մասնակցությամբ կազմակերպվել են մի շարք թեմատիկ

քննարկումներ – հրավիրվել են մամլո ասուլիսներ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ փոփոխություններ կատարելու, հասարակական կար–որ նշանակություն ունեցող, ինչպես նա– հար–ան պետություններում ազգային փոքրամասնություններին առնչվող խնդիրների կապակցությամբ: Պարբերաբար կազմակերպվում են Համակարգող խորհրդի հանդիպումները Հայաստանի Հանրապետության Նախագահի հետ, ուր վերջինիս անդամները անմիջականորեն Նախագահին են ուղղում իրենց հուզող հարցերը:

37. Համակարգող խորհրդի անդամներից մի քանիսը, սեփական նախաձեռնությամբ, որպես դիտորդ մասնակցել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրական հանրաքվեին:

38. 2007թ. աշնանը կազմակերպվել է Համակարգող խորհրդի անդամների ճանաչողական այցելությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, որտեղ նրանք հանդիպել են հանրապետության բարձրաստիճան ղեկավարության հետ: Պարբերաբար կազմակերպվել են արշավներ Հայաստանի տարբեր մարզեր, ուր այցելելով՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն առավել լայն պատկերացում են կազմել հայոց պատմության, մշակույթի ու միջմշակութային կապերի մասին: Կազմակերպվել է նա– Համակարգող խորհրդի անդամների այցելությունը Եղեգիս գյուղում վերջերս հայտնաբերված հրեական բնակավայր – գերեզմանոց:

39. Համակարգող խորհրդի գործունեության ընթացքում առավել հիշարժան են հետ–յալ նախաձեռնությունները.
   - եզդիերեն – ասորերեն լեզվով տարրական դասարանների դասագրքերի տպագրությունը,
   - Ազգությունների մշակութային կենտրոնի ստեղծումը, որի գաղափարը ծնվել է Խորհրդի նիստերում, այնուհետ– ներկայացվել Հայաստանի Հանրապետության Նախագահին – Հայաստանի Հանրապետության կառավարությանը: 2006թ. Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրականացրել է այդ գաղափարը. Եր–ան քաղաքի կենտրոնում Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների համար բացվել է Ազգությունների մշակութային կենտրոն, որը Հայաստանի Հանրապետության Նախագահի անմիջական միջամտությամբ կահավորվել – համալրվել է տեխնիկական սարքավորումներով:
   - Հայաստանի Հանրապետության Նախագահի խորհրդականի առաջարկությամբ 2007-2008 ուսումնական տարում երկու նպատակային տեղերի հատկացումը եզդի, քուրդ – ասորի շրջանավարտների համար Եր–անի պետական համալսարանի ար–ելագիտության ֆակուլտետի արաբագիտական բաժնում,
   - 2007թ. սկսել է լույս տեսնել նոր քրդական «Զագրոս» պարբերականը:

40. Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից 2008թ. հունիսի 13-ի հրամանագրով ստեղծվել է նոր խորհրդակցական մարմին՝ Հանրային խորհուրդը: Հանրային խորհուրդն ապաքաղաքականացված մարմին է, որի գործունեությունը հիմնվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, հասարակական միավորումների, սփյուռքի ներկայացուցիչների կամավոր մասնակցության սկզբունքի վրա: Հանրային խորհուրդը նպաստում է ժողովրդավարական համակարգի զարգացմանն ու մարդու – քաղաքացու հիմնարար իրավունքների – ազատությունների ապահովմանը, հասարակության

մեջ անհանդուրժողականության մթնոլորտի առաջացման կանխարգելմանը – քաղաքացիական հասարակության կայուն զարգացմանն ու ամրապնդմանը, պետական իշխանության մարմինների – քաղաքացիների, հասարակական այլ միավորումների (քաղաքացիական ինստիտուտների) միջ– փոխադարձ վստահության կայացմանը, հասարակության – իշխանության միջ– երկխոսության ու վստահելի գործընկերային հարաբերությունների ձ–ավորմանը, պետական կառավարման մեջ նրանց ներգրավվածության աստիճանի բարձրացմանը, ինչպես նա– հասարակական վերահսկողության իրականացմանը:

41. Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության – խնդիրների լուծման հետ կապված հիմնահարցերը վեր հանելու – քննարկելու նպատակով Հանրային խորհրդում ստեղծվել է հատուկ հանձնաժողով, որի մեջ են մտնում բոլոր ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները:

- *ավելացնել ջանքերը՝ ապահովելու բավարար – որակավորված ուսուցիչների – դասագրքերի մատչելիությունը փոքրամասնությունների լեզուների ուսուցման համար, միջոցներ ձեռնարկել՝ ստեղծելու նախադպրոցական կրթություն, հատկապես այն վայրերում, որտեղ ազգային փոքրամասնություններն ապրում են զգալի թվով, ավելի շատ լուծումներ կիրառել՝ նվազեցնելու բացակայությունների մակարդակը, որ ազդում է որոշ ազգային փոքրամասնությունների պատկանող աշակերտների վրա,*

42. Ըստ «Հայաստանի Հանրապետության պետական – համայնքային նախադպրոցական ուսումնական հաստատությունների օրինակելի հաստիքացուցակի, խմբերի խտությունը, նորմատիվները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կրթության – գիտության նախարարի 2007թ. հունվարի 26ՎՆի հրամանի՝ երեխաների խմբերի խտության հավելվածում առանձին դրույթ է նվիրված ազգային փոքրամասնությունների երեխաներ պարունակող խմբերի գործարկման հնարավորությանը՝ թերհամալրված համակազմով, ինչը կխթանի այդ երեխաների ընդգրկումը նախադպրոցական կրթության ուսումնական հաստատություններում: Այսպես, օրինակ, եթե նախադպրոցական հաստատությունների մանկապարտեզային խմբերում երեխաների համակազմի ցուցանիշները սահմանված են 25-30, ապա ազգային փոքրամասնություններով երեխաների խմբերի գործարկումը թույլատրվում է 8-10 երեխաների առկայության դեպքում:

43. Ստոր– ներկայացվում են ազգային փոքրամասնությունների բնակչություն ունեցող Հայաստանի Հանրապետության բնակավայրերում նախադպրոցական ուսումնական հաստատությունները կամ խմբերը.
   - Արտաշատում 1 մանկապարտեզ՝ ռուսերենի ուսուցմամբ, Արարատի մարզի զինվորական կայազորի ռուս երեխաների համար,
   - Շիրակի մարզի Գյումրի քաղաքում զինվորական կայազորի ռուս երեխաների համար 2 մանկապարտեզ՝ ռուսերենի ուսուցմամբ:

44. Արարատի մարզի Վերին Դվինի դպրոցում կան ասորերեն ուսուցմամբ դասա-րաններ, չկա ասորական մանկապարտեզ, սակայն ներկայումս ասորական հա-մայնքը ձեռնարկել է նախկին կիսաքանդ մանկապարտեզի շենքի վերանորո-

գումը՝ այն նախադպրոցական խմբերի ընդգրկմամբ կրթամշակութային կենտրոնի վերածելու նպատակով:

45. Եր-անի Կենտրոն համայնքում «Պիրեա» ՍՊԸ կարգավիճակով գործել է մեկ նախադպրոցական խումբ (տնօրեն՝ ազգությամբ հույն է), սակայն ներկայումս, պահանջարկ չլինելու հետ-անքով, գործում է հայկական խումբ: Մանկապարտեզում կազմակերպվում են տարաբնույթ կրթամշակութային միջոցառումներ հունական համայնքի համար:

46. Գյումրիի թիվ 18 մանկապարտեզի տնօրենը ազգությամբ եզդի է, Եր-անի Կենտրոն համայնքում թիվ 6 մանկապարտեզի տնօրենը ազգությամբ ռուս է: Ազգությամբ ռուս են նա- զինվորական կայազորների ենթակայության մանկապարտեզների տնօրենները:

- *շարունակել հնարավորություններ տրամադրել ազգային փոքրամասնությունների պատկանող այն անձանց, ովքեր նախընտրում են ռուսերեն լեզվով կրթությունը,*

47. Հայաստանի Հանրապետությունում ռուսերենով ուսուցմամբ հանրակրթական դպրոցներ՝ ըստ մարզերի

Վայր	Դպրոց
Եր-ան	7
	8
	29
	35
	55
	69
	62
	77
	85
	109
	122
	124
	132
	164
	147
	176
Կոտայքի մարզ	Հրազդանի թիվ 10 դպ.
	Աբովյանի թիվ 4 դպ.
	Նոր Հաճնի թիվ 2 դպ.
	Առզնիի գ. դպ.
	Չարենցավանի թիվ 3 դպ.
Գեղարքունիքի մարզ	Ս-անի թիվ 3 դպ.
Շիրակի մարզ	Գյումրիի թիվ 2 դպ.
	Գյումրիի թիվ 7 դպ.
	Գյումրիի թիվ 23 դպ.
Լոռու մարզ	Վանաձորի թիվ 4 դպ.
	Վանաձորի թիվ 11 դպ.
	Տաշիրի թիվ 1 դպ.

	Ֆիոլետովոյի դպ.
	Լերմոնտովոյի դպ.
Արմավիրի մարզ	Արմավիրի թիվ 5 դպ.
	Վաղարշապատի թիվ 5 դպ.
Տավուշի մարզ	Դիլիջանի թիվ 2 դպ.
	Իջ–անի թիվ 5 դպ.
Արարատի մարզ	Արտաշատի թիվ 4 դպ.
	Վերին Դվին գյուղի դպ.
	Դիմիտրովի գյուղի դպ.

48. Հայաստանի Հանրապետությունում կան նա– Ռուսաստանի Դաշնության բանակի կայազորի 6 դպրոցներ, որից երկուսը՝ Եր–անում, մնացածը՝ Արտաշատում, Մեղրիում, Արմավիրում, Գյումրիում: Հանրապետության 1410 միջնակարգ դպրոցներից մեկը ռուսերենով ուսուցմամբ է, իսկ 39-ում, որից 2-ը մասնավոր են, գործում են ռուսերենով ուսուցմամբ 1-11-րդ դասարաններ՝ (առանձին դպրոցներում բացակայում են որոշ դասարաններ): 37 դպրոցից 16-ը Եր–անում են, իսկ մնացածը՝ մարզերում: Ներկայումս Եր–անում գործում են երկու մասնավոր դպրոց՝ «Սլավյանսկայա» (դպրոցը ռուսերենով ուսուցմամբ է), «Մաշտոց» (ունի ռուսերենով ուսուցմամբ դասարաններ):

49. Սովորողների թիվը այս դասարաններում կազմում է շուրջ 10 հազար աշակերտ, որոնց ծնողներն ունեն Ռուսաստանի քաղաքացիություն կամ ազգությամբ ռուս են: Ռուսերենով ուսուցմամբ դասարաններում սովորում են նա– ազգային փոքրամասնությունների – Ռուսաստանից վերադարձած աշակերտները, որոնք ընդունվում են ռուսերենով ուսուցմամբ դասարաններ:

50. Հայաստանի Հանրապետության կառավարության – Ռուսաստանի Դաշնության կառավարության միջ– կրթության – գիտության ոլորտում համագործակցությունը հիմնականում իրականացվում է «Հայաստանի Հանրապետության կառավարության – Ռուսաստանի Դաշնության կառավարության միջ–մշակույթի, գիտության – կրթության բնագավառներում համագործակցության մասին» համաձայնագրի շրջանակներում (1995թ. նոյեմբեր): Ելնելով վերոհիշյալ համաձայնագրից՝ Հայաստանի Հանրապետության կրթության – գիտության նախարարությունը հանդիսանում է գործընկեր Ռուսաստանի Դաշնության կրթական – գիտական ծրագրերի իրականացման գործընթացում:

51. Ռուսերենով ուսուցմամբ դպրոցներում (դասարաններում) օգտագործվում են Ռուսաստանի Դաշնության կրթության նախարարության կողմից երաշխավորված դասագրքերը, ինչպես նա– Հայաստանի Հանրապետության կրթության – գիտության նախարարության կողմից երաշխավորված – հաստատված ծրագրերը:

52. 2006թ. սկսած յուրաքանչյուր տարի Ռուսաստանում Հայաստանի տարվա կապակցությամբ Ռուսաստանի կրթական – գիտական հաստատություններում անց են կացվել մի շարք միջոցառումներ՝ Հայաստանի – Ռուսաստանի գիտնականների, ինչպես նա– կրթության – գիտության ասպարեզում ականավոր գործիչների մասնակցությամբ:

53. Հանրապետության բոլոր հանրակրթական հայկական դպրոցներում ռուսաց լեզուն – գրականությունը դասավանդվում է սկսած 2-րդ դասարանից մինչ– 11-րդ դասարան, – ուսուցումը իրականացվում է Հայաստանում ստեղծված

դասագրքերով, որտեղ հաշվի են առնվել ազգային դպրոցում ռուսաց լեզվի դասավանդման առանձնահատկությունները:

54. 1999թ. ընդունված Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում բացվել են ռուսերենի խորացված ուսուցմամբ դպրոցներ (թվով 60), որտեղ առարկան դասավանդվում է 1-ին դասարանից: Այդ դպրոցների համար հրատարակվել են հատուկ դասագրքեր – մեթոդական ձեռնարկներ:

55. Հայաստանի Հանրապետության ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի – Հայաստանի Հանրապետության ռուսաց լեզվի զարգացման կենտրոնում պարբերաբար անց են կացվում ռուսաց լեզվի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, սեմինար-խորհրդակցություններ: Նման դասընթացներ են կազմակերպվում նա– Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանում: Յուրաքանչյուր տարի ուսուցիչների մի քանի խմբեր վերա-պատրաստման են մեկնում Մոսկվա:

56. Հայաստանի որոշ դպրոցները կրում են ռուս գիտնականների, գրողների – բանաստեղծների անունները՝ Ա.Սախարովի անվան, Վ.Մայակովսկու անվան, Ա.Բլոկի անվան, Ա.Չեխովի անվան, Վ.Բելինսկու անվան, Լ.Տոլստոյի անվան – այլն: Ա.Պուշկինի անունը կրող դպրոցները (Գյումրի, Վանաձոր, Ստեփանավան – Եր–ան քաղաքներում) տարիներ շարունակ մասնակցում են ԱՊՀ – Բալթյան երկրների դպրոցների խորհրդաժողովներին:

57. Հանրապետությունում ամենամյա անցկացվող դպրոցականների օլիմպիադա-ների առարկայացանկում տեղ է գտել նա– ռուսերենը (դպրոցական, շրջանային, քաղաքային, մարզային, հանրապետական փուլեր): Կազմակերպվում են մրցույթներ – փառատոններ: Հայաստանի դպրոցականները մասնակցում են ռուսաց լեզվի հեռահար (դիստանցիոն) օլիմպիադային – արդեն կան 3 հաղթողներ՝ Եր–անից, Կապանից – Սիսիանից:

58. Յուրաքանչյուր տարի դպրոցականները հանգստանում են Ռուսաստանի Դաշ-նության ամառային կրթական ճամբարներում (միջազգային ճամբար «Մոսկովիա»): Արդեն ավանդույթ է դարձել հանրակրթության ոլորտի ղեկավարների, դպրոցների տնօրենների – ուսուցիչների մասնակցությունը Մոսկվայում կազմակերպվող սեմինար-համաժողովներին: Հայաստանի Հանրապետության ռուսերենի 21 ուսուցիչներ 2004-2009թթ. դարձել են Պուշկինյան մրցանակակիրներ: Ամեն տարի Ռուսաստանի Դաշնությունից Հայաստան, որպես մարդասիրական օգնություն, ներմուծվում է ուսումնամեթոդական գրականություն: Տասը տարի շարունակ Հայաստանի Հանրապետությունում հրատարակվում է «Ռուսաց լեզուն Հայաստանում» ամսագիրը – անվճար տրվում է բոլոր դպրոցներին:

59. Հայաստանի Հանրապետության կրթության – գիտության նախարարությունը Ռուսաստանի Դաշնության տարբեր կրթական կազմակերպությունների – հասարակական կազմակերպությունների հետ համատեղ իրականացնում է տարատեսակ ուսումնական ծրագրեր – նախագծեր, այն նպաստում է Հայաս-տանի Հանրապետությունում ռուսաց լեզվի տարածմանը, զարգացմանը – դերի բարձրացմանը, որպես միջազգային հաղորդակցման միջոցի:

- *ստանձնել ավելի սիստեմատիկ վերահսկում Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներգրավմամբ խտրականության այն միջադեպերի նկատմամբ, որոնք պայմանավորված են էթնիկ ծագմամբ,*

60. 2003թ. հոկտեմբերի 21-ին ընդունվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, որից հետո 2004թ. փետրվարի 19-ին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան նշանակվել – 2004թ. մարտի 1-ից պարտականութունները ստանձնել է իրավապաշտպան, Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր մարդու իրավունքների հարցերի հանձնաժողովի անդամ, «Ընդդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպության նախագահ Լարիսա Ալավերդյանը: Օրենքի անցումային դրույթով նախատեսված էր, որ առաջին պաշտպանի լիազորու-թյունները դադարում են սահմանադրական փոփոխություններն ուժի մեջ մտնելուց հետո երեսուներորդ օրը: 2005թ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների ընդունումից հետո, համաձայն փոփոխված Սահմանադրության 83.1-րդ հոդվածի, 2006թ. փետրվարի 17-ին Ազգային ժողովի կողմից Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան է ընտրվել Արմեն Հարությունյանը՝ 6 տարի ժամկետով:

61. Յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանը Հայաստանի Հանրապետության Նախագահին, օրենսդիր, գործադիր – դատական իշխանության մարմիններ է ներկայացնում նախորդ տարվա ընթացքում իր գործունեության – երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին զեկույց, իսկ Ազգային ժողովի գարնանային նստաշրջանի ընթացքում դա ներկայացնում է Ազգային ժողովի նիստում: Ազգային փոքրամասնությունների համայնքների ղեկավարների – պաշտպանի գրասենյակի միջ– ձ–ավորված են համագործակցային հարաբերություններ: Պաշտպանը – նրա աշխատակազմը մասնակցում են ազգային փոքրամասնությունների համայնքների բոլոր միջոցառումներին:

62. Տե՛ս նա– զեկույցի 80-86 կետերը:

- *երաշխավորել, որ ազգային փոքրամասնությունների վերաբերյալ որ–է օրենք ամբողջությամբ համապատասխանում է Շրջանակային կոնվենցիայի դրույթներին:*

63. Ազգային փոքրամասնությունների վերաբերյալ որ–է օրենք ամբողջությամբ Շրջանակային կոնվենցիայի դրույթներին համապատասխանեցնելու առումով նշենք, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 6-րդ, «Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածները երաշխավորում են միջազգային պայմանագրի գերակայությունն ու անմիջական կիրարկումը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-20-րդ հոդվածների համաձայն Հայաստանի Հանրապետության իշխանության մարմինների որոշումները չպետք է հակասեն Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերին, իսկ 21-րդ հոդվածի համաձայն «Հայաստանի Հանրապետության օրենքներն ու իրավական այլ ակտերը պետք է

համապատասխանեն միջազգային իրավունքի համընդհանուր նորմերին ու սկզբունքներին»:

բ) Շրջանակային կոնվենցիայի կատարմանը ուղղված միջոցառումներ հոդված առ հոդված

Հոդված 1

Ազգային փոքրամասնությունների – այդ փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների – ազատությունների պաշտպանությունը մարդու իրավունքների միջազգային պաշտպանության անբաժան մասն է –, որպես այդպիսին, հանդիսանում է միջազգային համագործակցության բնագավառ:

64. Հայաստանի Հանրապետությունը ակտիվորեն համագործակցում է Եվրոպայի խորհրդի ազգային փոքրամասնությունների հարցերով զբաղվող – մոնիտորինգ իրականացնող մարմինների հետ՝ Ազգային փոքրամասնությունների հարցերով փորձագետների կոմիտե (DH-MIN), «Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին» շրջանակային կոնվենցիայի խորհրդատվական կոմիտե, Ռասիզմի – անհանդուրժողական դեմ եվրոպական կոմիտե (ECRI), «Տարածաշրջանային – փոքրամասնությունների լեզուների մասին» եվրոպական խարտիայի փորձագետների կոմիտե:

65. Հայաստանի Հանրապետության իշխանությունները կար–որում են նա–ռասայական խտրականության ցանկացած դրս–որման դեմ պայքարը թե՝ ազգային, թե՝ միջազգային մակարդակով: Դեռ–ս 2001թ. Դուրբանում կայացած Ռասիզմի դեմ համաշխարհային համաժողովի ընթացքում Հայաստանն ընտրվել էր համաժողովի փոխնախագահ՝ ակտիվորեն մասնակցելով դրա աշխատանքներին: Հետագայում, 2009թ. ապրիլի 20-24-ը Ժն–ում կայացած Դուրբանի վերանայման համաժողովի կազմակերպչական աշխատանքների հենց սկզբից՝ 2007թ.ից, Հայաստանն ակտիվ մասնակցություն է ցուցաբերել այդ գործընթացին՝ ընտրվելով Նախապատրաստական կոմիտեի փոխնախագահ – ղեկավարելով համաժողովի վերջնական փաստաթղթի առաջին նախագծի մշակման աշխատանքները: Դուրբանի հռչակագրի ու գործողությունների ծրագրի սկզբունքներն ընկած են ռասայական խտրականության դեմ պայքարին առնչվող Հայաստանի Հանրապետության պետական մարմինների գործունեության հիմքում: Ազգային մակարդակով դրանք հաշվի են առնվում թե՛ իրավական բարեփոխումների, թե՛ գործնական միջոցառումների իրականացման ընթացքում:

Հոդված 2

Սույն Շրջանակային կոնվենցիայի դրույթները պետք է կիրառվեն բարեխիղճ կերպով, ըմբռնման – հանդուրժողականության ոգով – բարի-դրացիության, պետությունների միջ– բարեկամական հարաբերությունների – համագործակցության սկզբունքներին համապատասխան:

66. Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանում ծավալուն միջոցառումներ են իրականացվել մարդու իրավունքներն պաշտպանությանն ուղղված

մեխանիզմները միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու ուղղությամբ, վավերացվել են մարդու իրավունքների ոլորտի տասնյակ միջազգային պայմանագրեր – բարեփոխվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

67. 2005թ. նոյեմբերի 27-ին հանրաքվեով ընդունվել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունները: Սահմանադրության 3-րդ հոդվածը հռչակում է, որ մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները – ազատությունները բարձրագույն արժեքներ են: Պետությունն ապահովում է մարդու – քաղաքացու հիմնական իրավունքների – ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը առաջնորդվում է մարդու – քաղաքացու հիմնական իրավունքներով – ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք: Ազատության իրավունքը սերտորեն կապված է անձեռնմխելիության, այն է՝ պետության կողմից երաշխավորված մարդու անվտանգության – ազատության հետ, որը բացառում է մարդու անձի, նրա պատվի – արժանապատվության նկատմամբ ցանկացած ոտնձգություն: Ահա թե ինչու, Սահմանադրության 14-րդ հոդվածի համաձայն «մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների – ազատությունների անքակտելի հիմք, հարգվում – պաշտպանվում է պետության կողմից»: Հայաստանի Հանրապետության Սահմանդրության փոփոխությունները ուղղված են պաշպանելու մարդու իրավունքը՝ որոշելու – պահպանելու իր ազգային – էթնիկական ինքնությունը (41-րդ հոդված), մտքի, խղճի – հավատքի ազատության (26-րդ հոդված) – կրոնական (8-րդ հոդված) իրավունքները:

68. Պետությունն ապահովում է մարդու իրավունքների – ազատությունների պաշտպանությունը օրենսդիր մարմնի միջոցով՝ ներպետական իրավական համակարգի ստեղծմամբ: Հարկ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության փոփոխված Սահմանադրությունը նույնպես որդեգրել է ներպետական օրենսդրության մեջ միջազգային պայմանագրային դրույթների ուղիղ փոխակերպման եղանակը: Այսինքն՝ սահմանադրական դրույթի համաձայն Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են – գերակա են ներպետական օրենքների հանդեպ: Ահա թե ինչու, Սահմանադրության 6-րդ հոդվածի համապատասխան դրույթի համաձայն, վավերացված միջազգային պայմանագրերում – ներպետական օրենքներում սահմանված նորմերի միջ– հակասություն առաջանալու դեպքում կիրառվում են պայմանագրի դրույթները:

69. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 41-րդ հոդվածը հռչակում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր ազգային – էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունք: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք ունեն իրենց ավանդույթների, կրոնի, լեզվի – մշակույթի պահպանման ու զարգացման իրավունքը:

Հոդված 3

1. Ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձ պետք է ունենա այդպիսին համարվելու կամ չհամարվելու ազատ ընտրության իրավունք, – այդ ընտրությունը կամ այն իրավունքների

իրականացումը, որոնք կապված են այդ ընտրության հետ, չպետք է տվյալ անձին դնեն անբարենպաստ պայմաններում:

2. *Ազգային փոքրամասնությունների պատկանող անձինք անհատապես, ինչպես նա- մյուսների հետ խմբերով կարող են իրականացնել իրավունքներ - օգտվել ազատություններից, որոնք բխում են սույն Շրջանակային կոնվենցիայում ամրագրված սկզբունքներից:*

70. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 41-րդ հոդվածում ամրագրված է . «Յուրաքանչյուր ոք ունի իր ազգային - էթնիկական ինքնությունը պահպանելու իրավունք»: Հայաստանում ազգային փոքրամասնությանը պատկանող յուրաքանչյուր անձ ազատորեն ընտրում է իրեն այդպիսին համարել կամ չհամարելը: Հայաստանում առայժմ շարունակվում է եզդիական - քրդական էթնիկ համայնքների միջ- անհանդուրժողականությունը: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս երկրորդ զեկույցում: Երկրորդ զեկույցում նշված խնդիրը եզդիական - քրդական դասագրքերի հետ կապված լուծվել է: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար նախաձեռնվել է եզդիերեն դասագրքերի տպագրություն եզդիական համայնքի համար - քրդերեն՝ քրդական համայնքի համար:

71. Համաձայն «Հայաստանի Հանրապետությունում անձնագրային համակարգի կանոնադրությունը - Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի նկարագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու ցանկությամբ նրա անձնագրում կարող է կատարվել նշում ազգության մասին՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրերի - վիզաների վարչության կամ նրա տարածքային ստորաբաժանումների, իսկ օտարերկրյա պետություններում՝ Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կամ հյուպատոսական հիմնարկների կողմից: Ազգային փոքրամասնություններին պատկանող անձինք, իրենց իրավունքների ոչ բավարար իմացության - կիրարկման պատճառով հաճախ չեն օգտվում այդ իրավունքից, որի հետ-անքով հնարավոր չի լինում ամբողջական տեղեկատվություն հավաքագրել ազգային փոքրամասնությունների վերաբերյալ:

Հոդված 4

1. *Կողմերը պարտավորվում են ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար երաշխավորել օրենքի առջ- հավասարություն - օրենքով հավասար պաշտպանություն: Այդ առումով արգելվում է ազգային փոքրամասնության պատկանելության վրա հիմնված ցանկացած խտրականություն:*
2. *Կողմերը պարտավորվում են անհրաժեշտ դեպքերում ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի տնտեսական, սոցիալական, քաղաքական - մշակութային կյանքի բոլոր բնագավառներում աջակցեն ազգային փոքրամասնությանը - բնակչության մեծամասնությանը պատկանող անձանց միջ- լիակատար - իրական հավասարությունը: Այս նպատակով Կողմերը, ըստ պատշաճի, պետք է հաշվի առնեն ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց առանձնահատուկ պայմանները:*
3. *Երկրորդ կետի դրույթներին համապատասխան ընդունված միջոցները չպետք է համարվեն խտրականություն:*

72. 2005թ. Սահմանադրական փոփոխություններով ընդունված14.1-րդ հոդվածը հռչակում է, որ բոլոր մարդիկ հավասար են օրենքի առջ–: Խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկական կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

73. 2007թ. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընդունած «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ – լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման արդյունքում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածը սահմանում է, որ իրավունքների, ազատությունների – պարտականությունների խտրականությունը՝ կախված ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, ծնունդից, արգելվում»:

74. Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը սահմանում է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը քաղաքացիների հավասարության սկզբունքներով: Մասնավորապես, 248-րդ հոդվածի համաձայն, «Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունն իրականացվում է օրենքի – գործը քննող մարմնի առաջ բոլոր քաղաքացիների հավասարության սկզբունքներով՝ անկախ նրանց ծագումից, սոցիալական – գույքային դրությունից, ռասայական – ազգային պատկանելությունից, սեռից, կրթությունից, լեզվից, կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքից, զբաղմունքի տեսակից – բնույթից, բնակության վայրից – այլ հանգամանքներից»:

75. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները հավասար են օրենքի առաջ՝ անկախ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելու հիմքերից, ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ – օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատություններն ու պարտականությունները:

76. «Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով –ս ամրագրվում է, որ բոլորը հավասար են օրենքի առջ– – առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով:

77. Իր հերթին Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը սահմանում է, որ մարդու – քաղաքացու իրավունքներն ու ազատություններն ուղղակի կամ անուղղակի խախտելը՝ կախված անձի ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, որը վնաս է պատճառել անձի օրինական շահերին, պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ:

78. Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի Հանրապետության ազգային խտրականության հողի վրա կատարված հանցագործություններ չեն գրանցվել:

79. Հայաստանի Հանրապետությունում բնակվող 11 ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կողմից 2004-2009թթ. Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրվել են 24 դիմում-բողոքներ:

80. Ստացված դիմում-բողոքներում բարձրացված խնդիրները վերաբերել են՝
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու հարցում հանդիպող բարդություններին,
- բնակարանային խնդիրներին, մասնավորապես, բնակարան ստանալու համար իրավասու մարմիններում հերթագրվելու բարդություններին,
- սոցիալական ծանր պայմաններին,
- սոցիալական ծառայութունների ոլորտում հանդիպող դժվարություններին, մասնավորապես ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկվելու, կենսաթոշակ ստանալու հարցերում հանդիպող բարդություններին,
- Հայաստանի Հանրապետության դատական մարմինների կողմից կայացված դատական ակտերի անհիմն լինելուն,
- ազատազրկման վայրերում գտնվող անձանց կողմից իրենց նկատմամբ կայացված դատավճիռների հետ համաձայն չլինելու դեպքերին:

81. Վերը նշված դիմումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանց իրավունքների խախտումները կրել են ընդհանուր բնույթ – կապված չեն եղել նրանց՝ ազգային փոքրամասնության ներկայացուցիչ լինելու հանգամանքի հետ, նրանց բողոքներում ներկայացվել են նույնպիսի հարցեր, ինչպիսիք բարձրացվում են ազգաբնակչության դիմում-բողոքներում ընդհանրապես:

82. Այդ բողոքներին ընթացք է տրվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, գործի բնույթից ելնելով՝ պաշտպանի կողմից կայացվել են «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված որոշումները: Արդյունքները տարբեր են եղել. որոշ բողոքներում բարձրացված հարցերը ստացել են դրական լուծումներ – բողոք բերած անձանց իրավունքները վերականգնվել են: Որոշ բողոքներում ներկայացված իրավունքների խախտման փաստերը պարզապես չեն հաստատվել, ուստի պաշտպանի կողմից կայացվել են մարդու իրավունքների խախտման բացակայության մասին որոշումներ:

83. Մի–նույն ժամանակ հարկ է նշել, որ երկու դիմումներով ազգային փոքրամասնությունների, մասնավորապես, եզդիական համայնքի ներկայացուցիչները բողոքել են իրենց նկատմամբ դրս–որվող խտրական վերաբերմունքից: Այսպես, նրանք բողոք են ներկայացրել այն մասին, որ իրենց նախնիների գերեզմանները պղծվել են՝ այդ վայրերում շինարարություն իրականացնելու հետ–անքով: Բողոքը Պաշտպանի կողմից ընդունվել է քննարկման – դեռ–ս ուսումնասիրման ընթացքի մեջ է:

84. Մեկ այլ գործով եզդիական համայնքի ներկայացուցիչները բողոքել էին, որ 1991թ. հողի սեփականաշնորհման ժամանակ եզդիների ոչ մի ընտանիք հող չի ստացել, եզդիները ներգրավված չեն գյուղի տեղական ինքնակառավարման

մարմնում, գյուղի հայկական թաղամասը գազաֆիկացվել – ասֆալտապատվել է, մինչդեռ եզդիների տները գազաֆիկացված չեն, իսկ նրանց տներին հարող փողոցներն անբարեկարգ վիճակում են, – այլն: Այս բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ պաշտպանը մանրամասն պարզաբանումներ է պահանջել համապատասխան համայնքի ղեկավարից, որը հանգամանորեն պարզաբանել է բողոքում բարձրացված յուրաքանչյուր հարց: Բողոքի քննարկումը դադարեցվել է մարդու իրավունքների խախտման բացակայության հիմքով:

85. Հարկ է նա– նշել, որ Մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունը ՄԱԿ-ի հովանավորությամբ իրականացրել է ամփոփ ուսումնասիրություն՝ Հայաստանի Հանրապետությունում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների կարգավիճակի – նրանց հիմնախնդիրների վերաբերյալ: Հետազոտության արդյունքները շուտով կներկայացվեն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով – այլ պատկան մարմիններ:

Հոդված 5

1. Կողմերը պարտավորվում են նպաստել ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց համար այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնք նրանց անհրաժեշտ են իրենց մշակույթը պահպանելու – զարգացնելու, ինչպես նա– ինքնության հիմնական տարրերը՝ կրոնը, լեզուն, ավանդույթները – մշակութային ժառանգությունը պահպանելու համար:

2. Իրենց ընդհանուր ինտեգրացիոն քաղաքականության իրականացման համար ձեռնարկվող միջոցներին ոչ ի վնաս Կողմերը պետք է ձեռնպահ մնան ցանկացած քաղաքական կամ գործնական գործողությունից, որը հետապնդում է ազգային փոքրամասնությունների պատկանող անձանց, հակառակ նրանց կամքի, միաձուլելու նպատակ, – պետք է այդ անձանց պաշտպանեն ցանկացած գործողությունից, որը ուղղված է այդպիսի միաձուլման:

86. Ազգային փոքրամասնությունների մշակութային ժառանգության, մշակույթի պահպանմանը, տարածմանը – զարգացմանը մշտապես նպաստելը հանդիսանում է մշակութային քաղաքականության գերակա ուղղություններից մեկը: Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը սերտ համագործակցության մեջ է ազգային փոքրամասնությունների միությունների – հասարակական կազմակերպությունների հետ – աջակցում է համերգների, ցուցահանդեսների – այլ մշակութային միջոցառումների կազմակերպմանը: Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունում ազգային փոքրամասնությունների միությունների ներկայացուցիչների հետ պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ, խորհրդակցություններ, ուր քննարկվում են համատեղ միջոցառումների ծրագրերը, մշակույթի ոլորտում ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրները, օրենսդրական դաշտի կատարելագործման առաջարկները: Քննարկումների արդյունքում կազմվում են արձանագրություններ – համապատասխան ստորաբաժանումներին տրվում հանձնարարականներ:

87. Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները կարող են մշակույթի ոլորտին վերաբերող իրենց առաջարկները ներկայացնել նա– նախարարության ինտերնետային կայքի (www.mincult.am) միջոցով, որտեղ պարբերաբար

տեղադրվում է տեղեկույթ մշակութային տարաբնույթ միջոցառումների, ինչպես նա– իրավական դաշտի փոփոխությունների վերաբերյալ:

88. Ազգային փոքրամասնությունների մշակույթի պահպանման – աջակցման նպատակով միջոցառումներ են նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագրի «4.4.4. Մշակույթ» բաժնի «9. Համագործակցություն Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների հետ» կետով, որի նպատակն է պահպանել ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնությունը – ներգրավվել Հայաստանի մշակութային դաշտին՝ ազգային փոքրամասնությունների լեզուներով ոչ պետական մամուլի – գրականության տպագրման, փառատոների կազմակերպման, կրոնական – էթնիկ համայնքների հուշարձանների վերականգման – ժամանակակից արվեստի զարգացմանն աջակցության միջոցով:

89. Հայաստանի Հանրապետության համար հատուկ նշանակություն ունեցող պետական ծրագրերի շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը մշակել է մի շարք կար–որագույն ռազմավարական ծրագրեր: Դրանցից է Ազգային անվտանգության ռազմավարության (հաստատվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007թ. փետրվարի 7-ի հրամանագրով) դրույթների հիման վրա մշակված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ապահովմանն ուղղված Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության գործունեության ուղղությունները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը – Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012թթ. ծրագիրը (Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից հաստատվել է 2008թ. ապրիլի 30-ին): Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարական դրույթներով նախատեսված մշակույթի ոլորտի միջոցառումների ծրագրի 6-րդ կետը վերաբերում է Հայաստանի տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների պատմական, հոգ–որ, մշակութային արժեքների – էթնիկական ինքնության պաշտպանությանը – նախատեսում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը ազգային փոքրամասնությունների ոլորտում խարսխվում է երեք հիմնարար սկզբունքների վրա.

ա) նպաստել էթնիկ ինքնության պահպանմանը – էթնիկ մշակույթի զարգացմանը,
բ) կանխարգելել էթնիկ որ–է խտրականություն,
գ) նպաստել Հայաստանի հասարակության մեջ ոչ հայազգի բնակչության լիարժեք ինտեգրմանը:

90. 2002թ. ընդունված «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Հայաստանի Հանրապետությունն աջակցում է իր տարածքում բնակվող ազգային փոքրամասնությունների մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը: Ազգային փոքրամասնությունների կրթամշակութային գործունեությանն աջակցելու նպատակով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում յուրաքանչյուր տարի նախատեսվում են ֆինանսական միջոցներ, որոնք հասանելի են բոլոր ազգային փոքրամասնություններին:

91. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության տարեկան – միջ-նաժամկետ ծախսային ծրագրերում «Պետական աջակցություն մշակութային

միջոցառումների իրականացմանը» ծրագրի «Աջակցություն ազգային փոքրամասնությունների մշակույթին» ենթածրագրով ամեն տարի նախատեսվում են բյուջետային հատկացումներ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների մշակութային միջոցառումներին աջակցելու նպատակով: Մասնավորապես վերոնշյալ ենթածրագրով 2007թ. նախատեսվել էր 700000 դրամ, 2008թ.՝ 1800000 դրամ, իսկ 2009թ. բյուջեում՝ 2300000 դրամ:

92. Բյուջետային հատկացումների աճը հնարավորություն տվեց ոչ միայն ընդլայնել ավանդաբար անցկացվող միջոցառումների մասնակիցների թիվը – աշխարհագրությունը, այլ– ներառել նոր ծրագրեր: Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունն արդեն 3 տարի իր ամենամյա միջոցառումները՝ երաժշտական փառատոները – նկարչական ցուցահանդեսները, կազմակերպում է մարզերում բնակվող ազգային փոքրամասնությունների հետ սերտ համագործակցության սկզբունքով – ներառում մեծ թվով համայնքային ստեղծագործողների՝ առանց տարիքային սահմանափակման: Բոլոր միջոցառումների ծրագրերը քննարկվում են Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

93. Միայն ազգային փոքրամասնությունների համար ավանդաբար իրականացվում են.
- Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների կերպարվեստի – դեկորատիվ կիրառական արվեստի ցուցահանդեսներ, որոնց մասնակցում են ստեղծագործողներ 11 համայնքներից: 2008թ. անց է կացվել 7-րդ ցուցահանդեսը (կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նախատեսվել է 500000 դրամ):
- Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոն, որին մասնակցում են ազգային փոքրամասնությունների բոլոր համայնքների ներկայացուցիչները: Փառատոնին ներկայացվում են ազգային երգն ու պարը, երաժշտությունը: Փառատոնը ավանդաբար անց էր կացվում Եր–անում, սակայն վերջին տարիներին այն կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության մարզերում, որտեղ հիմնականում բնակվում են ազգային փոքրամասնությունները: 2008թ. փառատոնն անց է կացվել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա քաղաքում (կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նախատեսված էր 700000 դրամ), որի համար Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարը հատուկ մրցանակ է շնորհել «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների երաժշտական փառատոնին՝ 2008թ. լավագույն մարզային մշակութային նոր նախագծի համար»:
- 2008թ. սկսած իրականացվում է նոր ծրագիր՝ «Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների հուշարձանների այցելության կազմակերպում – տեսաֆիլմի ստեղծում»: Ծրագիրն ունի ոչ միայն գիտաճանաչողական բնույթ, այլ– նպատակ ունի հասարակությանը ներկայացնել մշակութային ժառանգությունը (կազմակերպման համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նախատեսվել էր 600000 դրամ): Վերոնշյալ ծրագրերի իրականացման համար 2009թ. պետական բյուջեով նախատեսվում է 2300000 դրամ, 2008թ.-ի 1800000 դրամի դիմաց:
- 2008թ. սկսված ծրագրերից է ազգային փոքրամասնությունների գրականության հրատարակումը: Մասնավորապես, հրատարակվել է «Ազգային փոքրամասնությունների ստեղծագործողների գրական ալմանախը»,

որտեղ ներկայացվել են ազգային փոքրամասնությունների ստեղծագործողները, ինչի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից 2008թ. տրամադրվել է 950000 դրամ: 2009թ. ազգային փոքրամասնությունների գրականության հրատարակման ուղղությամբ նախատեսվում է 540000 դրամ (տրամադրվող գումարի նվազումը պայմանավորված է երկրի տնտեսական իրավիճակով):

- 2009թ. նախատեսվում է նկարահանել «Ասորիները Հայաստանում» ֆիլմը (պետական բյուջեից նախատեսվում է հատկացնել 1000000 դրամ):

94. Մի շարք միջոցառումներ են կազմակերպվել «Հայաստանի Հանրապետության ազգությունների խորհուրդ» հասարակական կազմակերպության կողմից: Մայրենի լեզվով հեքիաթասացության մրցույթին մասնակցել են նա– ազգային փոքրամասնությունների երեխաները – արժանացել մեդալների իսկության հավատարմագրերով: 2008թ. Ա. Բաբաջանյան համերգասրահում նշվել է երեխաների պաշտպանության օրը, որտեղ ազգային փոքրամասնությունների երեխաները ցուցադրել են իրենց արվեստը, երգն ու պարը: «Հայաստանի Հանրապետության ազգությունների խորհուրդ» հասարակական կազմակերպությունը կազմակերպել է նա– «Քուրդ մտավորականության խորհուրդ» հասարակական կազմակերպության նախագահ Ամարիկե Սարդարի «□□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□» գրքի շնորհանդեսը, որը լույս է տեսել 2005թ.:

95. Հայաստանի ազգային գրադարանում ազգային փոքրամասնությունների լեզուներով պահվում – օգտագործվում են մոտ 450 հունարեն, 686 քրդերեն – բազմահազար ռուսերեն գրքեր: Այդ լեզուներով մեծաքանակ գրականություն կա նա– հանրապետության այլ գրադարաններում, իսկ ռուսերենով՝ նա– դպրոցական գրադարաններում: Ինչպես հիշյալ, այնպես էլ այլ փոքրամասնությունների լեզուներով (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններից վրացերենի, ուկրաիներենի, բելառուսերենի, գերմաներենի, լեհերենի) զգալի ծավալի գրականություն կա Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի – համապատասխան գիտահետազոտական ինստիտուտների գրադարաններում:

96. 2008թ. «Գրականության գծով պետական պատվեր» ծրագրով հրատարակվել է նա– գրականություն ազգային փոքրամասնությունների լեզուներով: Հրատարակվող գրականության ցանկը բերվում է ստոր– ներկայացվող աղյուսակներում.

*Ազգային փոքրամասնությունների գրականություն (*2008թ.)						
			Ծավալը (տպագրական մամուլ)	*Տպաքանակը (օրինակ)*	*Տպագրվող մեկ օրինակի գինը (դրամ)*	*Գումարը (դրամ)*
1.	Ամարիկե Սարդար	«Մեր գյուղը», պատմվածքներ (քրդերեն)	7	500	1000	500000
2.	Ծամոյան Սմո	Ընտրանի	10	500	900	450000
Ընդամենը			*17*	*1000*		*950000*

Ազգային փոքրամասնությունների գրականություն (2009թ.)						
			Ծավալը (տպագրական մամուլ)	*Տպաքանակը (օրինակ)*	*Տպագրվող մեկ օրինակի գինը (դրամ)*	*Գումարը (դրամ)*
1.	Ահմադե Խանի (թարգմանություն քրդերենից՝ Չ. Ռաշ-Մստոյան)	«Մամ ու Զին»	10	300	1000	300000
2.	Սամանդ Սիմա	Պատմվածքներ, քրդերեն	8	300	8000	240000
Ընդամենը			*18*	*600*		*540000*

97. Ազգային փոքրամասնությունների պատմական – ժամանակակից հուշարձանների ճանաչումն ապահովելու նպատակով 2008թ. սկսած մշակույթի նախարարությունը ձեռնարկել է նոր ծրագիր՝ ֆիլմաշարի արտադրություն: Արդեն պատրաստ է Հայաստանի հյուսիսային գոտու՝ Արագածոտնի – Լոռու հուշարձանների վերաբերյալ «Մեր երգն ու մեր հուշարձանները» վերնագրով 34 րոպեանոց տեսաֆիլմը, որտեղ ներկայացված է նա– Ախթալայի երաժշտական փառատոնը:

98. Ներկայիս մշակութային քաղաքականության կար–որ խնդիրներից է նա– ազգային փոքրամասնությունների ստեղծագործողների – խմբերի ներգրավումը մշակութային միջոցառումներին: Մասնավորապես՝ մարզերում մշակութային կյանքն աշխուժացնելու – ստեղծագործական խմբերին խրախուսելու նպատակով նախարարությունը հանրապետական բնույթի միջոցառումներում («Տիկնիկային թատրոնների հանրապետական փառատոն») մշտապես հրավիրում է ազգային փոքրամասնությունների համապատասխան խմբերին (ռուսական «Գարմոշա» թատերախումբ), խրախուսում, նրանց աշխատանքը լուսաբանում ՁԼՄ-ներով:

99. Հայաստանում ազգային փոքրամասնությունների լեզուներով 2008-2009թթ. հրատարակվում է 11 թերթ (այդ թվում՝ 9 մամուլ հրատարակվում է պետական աջակցությամբ) – 4 ամսագիր (որից 3-ը պետական աջակցությամբ): Ստոր– աղյուսակում ներկայացվում է Ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող մամուլին 2009թ. նախատեսվող պետական աջակցության տվյալները (2008թ. տրմադրվել է 9627100 դրամ):

Ազգային փոքրամասնությունների լեզուներով լույս տեսնող մամուլ (2009թ.)		Ընդհանուր՝ 12168000 դրամ
Թերթեր		
«Եզդիների ազգային միություն» ՀԿ	«Էզդիխանա»	1000000
«Եզդիների ազգային կոմիտե» ՀԿ	«Լալըշ»	1000000
«Ռյա-Թազա» թերթի խմբագրություն» ՍՊԸ	«Ռյա-Թազա»	1000000
«Գոլոս» ՍՊԸ	«Գոլոս Արմենիի»	500000

«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» ՀԿ	«Դնիպրո-Սլավուտիչ»	2668000
«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ	«Զագրոս»	1000000
Հայաստանի հրեական համայնք	«Դավթի վահան»	500000
«Իվերիա» վրացական բարեգործական համայնք» ՀԿ	«Իվերիա»	500000
«Նովոյե վրեմյա» օրաթերթի խմբագրություն» ՍՊԸ	«Նովոյե վրեմյա»	500000
Ամսագրեր		
«ԱՕԿՍ» ՀԿ	«Պալիտրա»	500000
«Պատրիդա» ՀԿ	«Բյուզանդական ժառանգություն»	500000
«Լիտերա» ՍՊԸ	«Լիտերատուրնայա Արմենիա»	2500000

100. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ֆինանսավորմամբ Եր–անում – մարզերում ազգային փոքրամասնությունների բոլոր համայնքների մասնակցությամբ ավանդաբար անցկացվում է գեղարվեստի – դեկորատիվ կիրառական արվեստի ցուցահանդես – երաժշտական փառատոն: Հայաստանի Հանրապետությունում պետական պաշտպանության տակ են առնված Հայաստանի Հանրապետության տարածքի ողջ պատմաճարտարապետական, մշակութային – կրոնական կառույցները՝ անկախ դրանց էթնիկ կամ կրոնական պատկանելությունից: Պետությունն ուշադրության կենտրոնում է պահում ազգային առանձին համայնքների մշակութային – ստեղծագործական կյանքը:

101. Ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների ղեկավարների կողմից բարձրացվել է Եր–անի Սարյան 22 հասցեում գտնվող ազգային փոքրամասնությունների մշակույթի կենտրոնի կարգավիճակի հարցը. կա՛մ այն դնել Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ենթակայության ներքո, կա՛մ դարձնել առանձին կենտրոն: Մշակույթի նախարարության հետ քննարկման արդյունքում առաջարկվել է այն նախարարության ներքո պետական ոչ առ–տրային կազմակերպություն դարձնել: Գործընթացն առայժմ դադարեցվել է՝ պայմանավորված տնտեսական ճգնաժամով:

102. Ազգային փոքրամասնությունների կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից առաջարկել է ազգային փոքրամասնությունների կոմպակտ բնակության մարզերում հիմնել ազգային փոքրամասնությունների մշակութային կետրոններ՝ ինչպես Եր–անում: Այս հարցի առնչությամբ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարությունը դիմել է մարզպետարաններին: Հարցը տեղերում կքննարկվի համապատասխան համայքների ղեկավարների – ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ:

103. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնություններին հատկացվող 10 մլն դրամաշնորհը, որ բաժանվում է ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպությունների միջ– տնօրինվում է այդ կազմակերպությունների նախագահների կողմից: Այդ գումարները

հիմնականում ծախսվում են ազգային փոքրամասնությունների համար համայնական նշանակություն ունեցող տոների – միջոցառումների, ինչպես նա– որոշ անհրաժեշտ ծախսեր հոգալու համար (ազգային հագուստի ձեռք բերում, միջոցառումների համար տարածքի վարձակալում, մրցանակներ – այլն): Բացի պետբյուջեով նախատեսված 10 միլիոն դրամ դրամաշնորհից, հասարակական կազմակերպությունները դրամաշնորհ են ստանում նա– իրենց ներկայացրած ծրագրերի դիմաց: Ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններն իրենց կրթամշակութային կարիքները հոգալու համար, բացի Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցությունից, սնվում են նա– այլ աղբյուրներից՝ դեսպանատներ, միջազգային հիմնադրամներ – այլն:

104. Մարզային մշակութային զարգացման ծրագրերում հաշվի է առնվում այն հանգամանքը, որ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները մեծ մասամբ բնակվում են Հայաստանի Հանրապետության մարզերում: Ամեն մարզի նկատմամբ ցուցաբերվում է տարբերակված մոտեցում՝ կախված տվյալ մարզում բնակվող ազգային փոքրամասնության առանձնահատկություններից – հիմնախնդիրներից: Վերոհիշյալ ծրագրերի կազմման աշխատանքներին ներգրավվում են ազգային փոքրամասնությունների միությունների ներկայացուցիչները: Նախատեսվում է Հայաստանի Հանրապետության մարզերում գործող մշակույթի տների վերականգման պետական ծրագիր, որը կնպաստի նա– մշակութային կյանքի աշխուժացմանը – հասարակության ներգրավմանը մշակութային գործունեության մեջ:

105. Ըստ էության գյուղական համայնքներում, ընդհանրապես, մշակութային կյանքն այնքան էլ ակտիվ չէ: Համայնքներում մշակութային միջոցառումները ֆինանսավորվում են գյուղական համայնքների բյուջեի հաշվին, որը ամբողջ երկրի տարածքում, ընդհանուր առմամբ, փոքր գումար է կազմում: Այն հիմնականում չի բավականացնում, մշակույթի տները շատ վատ վիճակում են, շատ քիչ գյուղերում կան երգի պարի համույթներ, երաժշտական գործիքներ: Դպրոցը մշակույթի կենտրոնի դեր է ստանձնել: Դպրոցական միջոցառումների շրջանակներում ներկայացվում է նա– ազգային փոքրամասնությունների մշակույթը: Համայնքների ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներն ինքնաբուխ նշում են իրենց ավանդական բոլոր տոներն ու ծեսերը: Հարկ է նշել, որ գյուղերում մշակութային կյանքի այս վիճակը համատարած բնույթ է կրում Հայաստանի Հանրապետությունում: Տարբեր ծրագրերով ֆինասավորվում – վերանորոգվում են գյուղերի մշակույթի տները, սակայն դեռ անելիքներ շատ կան: Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2012թթ. ծրագրով նախատեսվում է լուծել սույն խնդիրը, սակայն տնտեսական ճգնաժամն արդեն իսկ խախտել է ժամկետները:

106. Հայաստանը ներգրավված է «Բոլորը տարբեր են, բոլորը հավասար» Եվրոպայի խորհրդի ծրագրին, որի շրջանակում իրականացվող տեղական նախաձեռնություններում հատուկ տեղ է հատկացվել կրոնական – մշակութային հանդուրժողականության զարգացմանը:

107. Ինչպես նշվել է վերը, 2004թ. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ընդունված որոշմամբ Եր–ան քաղաքի կենտրոնում տարածք է հատկացվել ազգային փոքրամասնություններին մշակութային կենտրոնի ստեղծման համար, որը բացվել է 2007թ.:

108. Շողակաթ հեռուստաալիքի մանկական հաղորդումների խմբագրության – Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների – կրոնի հարցերի վարչության համագործակցությամբ պատրաստվել է Հայաստանում բնակվող ազգությունների – կրոնական մի շարք համայնքների հեքիաթները – դիցաբանությունը (առասպելները) ներկայացնող հաղորդաշար:

109. 2005թ. Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքում Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության – ԵԱՀԿ եր–անյան գրասենյակի հովանավորությամբ «Հանդուրժողականության մշակույթ» խորագրով անց է կացվել Հայաստանի հրեա կոմպոզիտոր Վիլլի Վայների ստեղծագործությունների մենահամերգը, պատարաստվել է Վիլլի Վայների՝ համերգում հնչած – այլ ստեղծագործությունների DVD-ին:

110. 2006թ. Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Եր–անի կենտրոնում, հրեական համայնքի ջանքերով, Եր–անի քաղաքապետարանի աջակցությամբ – Հանրապետական կուսակցության ֆինանսական օժանդակությամբ կանգնեցվել է Հոլոքոստին – Հայոց ցեղասպանությանը նվիրված հուշարձան:

111. 2007թ. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 21 միլիոն դրամ է հատկացրել Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզում գտնվող 14-17-րդ դարերի հրեական գերեզմանատուն-հուշարձանի բարեկարգման աշխատանքների համար, որն ավարտվել է 2008թ. աշնանը: Գերեզմանոցի բարեկարգման նշանավորման արարողությունը – դրան նվիրված միջազգային գիտաժողովը տեղի է ունեցել 2009թ. մայիսին: Միջոցառումը, որին մասնակցել են Իսրայելից ժամանած բարձարաստիճան հյուրեր, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աջակցությամբ կազմակերպել էր Հայաստանյաց առաքելական եկեղեցու Սյունյաց թեմի առաջնորդը, ով հայտնաբերել – նախապես իր պահպանության տակ էր առել նշված գերեզմանատունը:

112. 2008թ. հուլիսին Հայաստանի Հանրապետության վարչապետը իր հուշամեդալով է պարգ–ատրել «Հայաստանի հրեական համայնք» հասարակական կազմակերպութան ղեկավար տիկին Ռիմա Վարժապետյանին՝ հայ-հրեական կապերի զարգացման – ամրապնդման համար:

113. 2007թ. Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմը ֆինանսական օժանդակություն է ցուցաբերել ասորական, եզդիական – քրդական համայնքներին՝ իրենց երգի-պարի համույթների մասնակիցներին ազգային զգեստներով ապահովելու համար:

114. 2007թ. ազգային փոքրամասնությունների մշակույթի կենտրոնում պետական ֆինանսավորմամբ բացվել է ասորական երգի մշակման – ձայնագրման ստուդիա:

115. ԽՍՀՄ շրջանում ազգայնացված կրոնական կառույցները համապատասխան կրոնական համայնքներին վերադարձնելու գործընթացում 2005թ. ասորական կրոնական համայնքին են վերադարձվել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Արզնի գյուղի Սուրբ Մարիամ (Աստվածածին) – Արարատի մարզի Վերին Դվին գյուղի Սբ. Թովմաս եկեղեցիները: Ռուսական կրոնական համայնքին է վերադարձվել Ռուս Ուղղափառ եկեղեցու Եր–ան քաղաքի Սուրբ Տիրամոր եկեղեցին:

116. Հաշվի առնելով Հայաստանի ասորական համայնքի խնդրանքը Հայ-ասորի ժողովուրդների՝ 1915թ. անմեղ զոհերի հիշատակին նվիրված հուշարձան տեղադրելու մասին՝ Եր–անի քաղաքապետի 2008թ. նոյեմբերի 12-ի որոշմամբ Եր–ան քաղաքի կենտրոնական մասում՝ Օղակաձ– զբոսայգում (Նալբանդյան – Մոսկովյան փողոցների խաչմերուկին հարող տարածք) 16քմ. մակերեսով հողատարածք է հատկացրել հուշարձանի տեղադրման համար: Հուշարձանի տեղադրումը նախագծային աշխատանքների փուլում է:

117. Հաշվետու ժամանակաշրջանում Հայաստանի Հանրապետության կառավարության աջակցությամբ ազգային փոքրամասնությունների կողմից պարբերաբար նշվում են համայնական նշանակություն ունեցող տոներ ու միջոցառումներ, որոնք ներկայացված են հավելված 3-ում: Բացի նշված միջոցառումներից Հայաստանի Հանրապետության կառավարությունը խրախուսում – նպաստավոր պայմաններ է ստեղծում ազգային փոքրամասնությունների համար՝ տարեցտարի հարստացնելու իրենց մշակութային կյանքը զանազան այլ միջոցառումներով, որոնց մի մասը ավանդական դառնալու միտում ունի: Դրանցից են.

- 2008թ. դեկտեմբերին Եր–անի «Նարեկացի արվեստի միության» ցուցասրահում կազմակերպված Հայաստանի ասորական համայնքի արվեստագետների աշխատանքների ցուցահանդեսը, որի բացման արարողության ընթացքում ցուցադրվել է նա– «Ասորիները Ար–ելյան Հայաստանում» ֆիլմը:
- 2008թ. նոյեմբերին, «Ազգային փոքրամասնությունների մշակույթը» նախագծի շրջանակներում, Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը ներկայացված Գ.Գյուրջի–ի ֆոլկլորային ստեղծագործությունները՝ առաջին անգամ ժողովրդական նվագարանների համույթի կատարմամբ:
- Գերմանական համայքի նախաձեռնությամբ պետական ֆինանսավորմամբ հրատարակված Հ□□□□□□ ՎՆ □□□□□□□□□□□ □□□□□ՄՆ (2008թ.) – Հ□□□□□□□□ □□□□□□□□ □□□□□□□ □□□□□□ □ □□□□□□□□□□□ՄՆ (2009թ.) գրքերը:
- 2009թ. ապրիլի 18-19 «Մոսկվայի տուն» մշակութային-բիզնես կենտրոնում տեղի ունեցած «Ռուսաց լեզվով մանկական դպրոցական ներկայացումների» երրորդ փառատոնը:

118. Երկրում բազմամշակութայնությունը խրախուսելու – ազգային փոքրամասնություններին ճանաչելի դարձնելու ուղղությամբ կատարվող քայլերից է «Հայաստանի ազգությունների էստրադային ծիածան» երիտասարդական փառատոնը, որը տեղի է ունեցել «Արամ Խաչատրյան» համերգասրահում 2009թ. փետրվարին: «Հայաստանի ազգությունների էստրադային ծիածան» երիտասարդական փառատոնին մասնակցել են Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների բոլոր ներկայացուցիչները: Փառատոնը ֆինանսավորվել է Հայաստանի Հանրապետության սպորտի – երիտասարդության հարցերի նախարարության – «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կետրոն» պետական ոչ-առ–տրային կազմակերպության կողմից – կազմակերպվել Հայաստանի Հանրապետության կառավարության – Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աջակցությամբ:

Հոդված 6

1. *Կողմերը պետք է խրախուսեն հանդուրժողականության – մշակույթների միջ– երկխոսության մթնոլորտը – պետք է արդյունավետ քայլեր ձեռնարկեն իրենց տարածքներում բնակվող բոլոր անձանց միջ–, անկախ նրանց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելությունից, փոխադարձ հարգանքը, փոխըմբռնումը – համագործակցությունը խթանելու համար, մասնավորապես, կրթության, մշակույթի – լրատվական միջոցների բնագավառներում:*
2. *Կողմերը պարտավորվում են ձեռնարկել համապատասխան միջոցներ այն անձանց պաշտպանելու համար, ովքեր կարող են իրենց էթնիկական, մշակութային, լեզվական կամ կրոնական պատկանելության պատճառով դառնալ սպառնալիքների, խտրականության, թշնամական կամ բռնի գործողությունների զոհ:*

119. 2007թ. հունիսին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Բ-ն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունել է Համակարգող խորհրդի անդամներին: Հանդիպման ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորել է ազգային փոքրամասնություններին պահպանել իրենց ազգային դիմագիծը –, իբր– Հայաստանի Հանրապետության հավատարիմ քաղաքացիներ, իրենց կարելին ներդնել ի բարօրություն Հայաստանի:

120. 2008թ. դեկտեմբերի 17-ին Եր–անի «Նարեկացի արվեստի կենտրոնում» տեղի է ունեցել «Պատկերացրու քո ապագան» ծրագրի շրջանակներում պատրաստված փոքրիկ ֆիլմերի (DigiTale) շնորհանդեսը: Փոքրիկ ֆիլմերը պատրաստվել են Հայաստանում էթնիկ խմբերի ներկայացուցիչների կողմից իրենց հուզող, հետաքրքրող հարցերի, խնդիրների, մտորումների, նույնիսկ՝ իրերի մասին: «Պատկերացրու քո ապագան» ծրագիրը Բրիտանական խորհրդի «Ապրենք միասին» ծրագրի մի մասն է, որի նպատակն է ծրագրի մասնակիցներին՝ էթնիկ խմբերի ներկայացուցիչներին, ազատ արտահայտվելու, իրենց – իրենց էթնիկ համայնքի խնդիրները վեր հանելու հնարավորություն ընձեռել: Էթնիկ խմբերի ներկայացուցիչների կողմից պատրաստված պատմությունները, կտեղադրվեն տարբեր կայքէջերում, կցուցադրվեն հեռուստաընկերություններով – տարբեր միջոցառումների ընթացքում կներկայացվեն հանրության քննարկմանը: Հայաստանի Հանրապետության կառավարության ազգային փոքրամասնությունների – կրոնի հարցերի վարչության աշխատակիցներն աջակցել են Հայաստանում Բրիտանական դեսպանատանը՝ աշխատանքների կազմակերպման ընթացքում:

121. ԵԱՀԿ եր–անյան գրասենյակի – Համաշխարհային անկախ երիտասարդական միավորման նախաձեռնությամբ, Հայաստանի Հանրապետության ազգային փոքրամասնությունների – կրոնի հարցերի վարչության աջակցությամբ 2008թ. հուլիսի 29-ին Լուսակերտում տեղի են ունեցել վերապատրաստման մեկշաբաթյա դասընթացներ Հայաստանի ազգային փոքրամասնությունների երիտասարդության շրջանում առաջնորդների կարողությունների խորացման – զարգացման նպատակով: Այս դասընթացը ԵԱՀԿ գրասենյակի – վարչության հետ համատեղ մշակած հանդուրժողականության վերաբերյալ ծրագրի մի մասն է:

122. 2009թ. մարտի 20-ին Եր–ան քաղաքի Ազատության պողոտա հասցեում գտնվող Հաղթանակի զբոսայգում (քաղաքի ամենամեծ զբոսայգին) հրեական համայնքի ջանքերով – Եր–անի քաղաքապետարանի աջակցությամբ բացվել է Հայաստան-Իսրայել «Բարեկամության ծառուղի»՝ ի պատիվ Իսրայելի պետության 60-ամյակի:

123. 2004թ. սկսած ամեն տարի, ներառյալ նա– այս տարի, դպրոցների ամառային հանգստյան – ճամբարների կազմակերպման ընթացքում Հայ առաքելական եկեղեցու Սյունյաց թեմը հրավիրում է ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին՝ նրանց երեխաների հանգիստն այդ ճամբարներում հայ երեխաների հետ միասին անցկացնելու: Երեխաների հանգիստը հայ ջոկատավարների հետ միասին կազմակերպում են նա– ազգային փոքրամասնության ներկայացուցիչները: 2009թ. սկսած Հայաստանի Հանրապետության կառավարության ազգային փոքրամասնությունների – կրոնի հարցերի վարչությունը –ս մասնակցում է այդ միջոցառման կազմակերպական աշխատանքներին:

124. Հայաստանի Հանրապետությունում բնակվող ազգային փոքրամասնությունների հետ փոխհամագործակցությունը – երկխոսությունը զարգացնելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության սպորտի – երիտասարդության հարցերի նախարարության կողմից կազմակերպվել են նա– հետ–յալ միջոցառումները.
- 2006 – 2008թթ. «Երիտասարդություն. իրականություն, հեռանկարներ» հանրապետական երիտասարդական համաժողով,
- 2007 – 2008թթ. «Մշակույթների երկխոսություն» միջմշակութային երիտասարդական փառատոն,
- 2008թ. «Ճանաչենք իրար» պատմաճանաչողական ծրագիր,
- 2009թ. «Հայաստանի ազգությունների էստրադային ծիածան»:

125. Հայաստանի Հանրապետության սպորտի – երիտասարդության հարցերի նախարարությունը աջակցել է նա– «Իվերիա» համայնքին՝ ապահովելով 2008թ. օգոստոսի 4-14-ը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում կայացած «Հայրենական ճամբար» միջոցառմանը մասնակցելու հրավեր ստացած 15 երիտասարդների մասնակցությունը:

126. 2008թ. հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության օրը, – հեկտեմբերին՝ Էրեբունի-Եր–ան տոնակատարությունների շրջանակներում ազգային փոքրամասնությունների մասնակցությամբ կազմակերպվել են տոնական համերգներ:

127. Եր–անի քաղաքապետարանի աջակցությամբ՝ 2007թ. նոյեմբերի 19-22-ը Եր–ան քաղաքի պատմության թանգարանում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները՝ ռուսները, եզդիները, ասորիները, ուկրաինացիները, հույները, վրացիները ցուցադրել են իրենց ազգային-մշակութային գործերը:

128. Ամանորի կապակցությամբ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հրավիրվել – մասնակցել են Եր–անի քաղաքապետարանում կազմակերպված տոնական ընդունելությանը:

129. Եր–անի քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից աշխատանքներ են տարվել ազգային փոքրամասնությունների մի շարք սոցիալական խնդիրների լուծման ուղղությամբ՝ սոցիալապես անապահով ընտանիքներին օգնության տրամադրում, երեխաների չգրանցված ծնունդների գրանցում, անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերում, վերականգնում – այլն:

130. Նախատեսվում է Եր–անի քաղաքապետարանի «Եր–ան 7 օր» թերթում, ինչպես նա– «Արմնյուզ» հեռուստաալիքով հեռարձակվող «Մայրաքաղաք» ծրագրով այսուհետ –ս հաճախակի անդրադառնալ Եր–անում բնակվող ազգային փոքրամասնություններին, նրանց խնդիրներին – հուզով հարցերին:

Հոդված 7

Կողմերը պետք է ապահովեն ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ խաղաղ հանրահավաքների, միությունների մեջ ընդգրկվելու, խոսքի, մտքի, խղճի – դավանանքի ազատության իրավունքների հարգումը:

131. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 26-29-րդ հոդվածները, ինչպես նա– համապատասխան օրենքները երաշխավորում են մտքի, խղճի, կրոնի, համոզմունքների, խաղաղ հավաքներ – միավորումներ կազմելու ազատության – ազատ արտահայտվելու մարդու – քաղաքացու իրավունքները:

132. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 28-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմել – դրանց անդամագրվել: Դրա հետ միաժամանակ, հարկ է նշել, որ 47-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է սահմանափակում, մասնավորապես՝ «արգելվում է իրավունքների – ազատությունների օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով»:

133. Հաշվետու ժամանակահատվածու ազգային կազմակերպությունների կողմից հանրային միջոցառումների վերաբերյալ Եր–անի քաղաքապետարան է ներկայացվել հետ–յալ 10 իրազեկումները, որոնք ընդունվել են ի գիտություն, իսկ երթերն ու հավաքներն ընթացել են անխափան.

- «Քուրդիստան» կոմիտե - Մաշտոցի պողոտայի սկզբնամասից, Մաշտոցի պողոտա-Ամիրյան-Աբովյան փողոցներով մինչ– Տերյան-Մոսկովյան փողոցների հատման մաս երթուղով երթ (քայլերթ) 13.02.2004թ., ժ.12:00-15:00,
- «Քուրդիստան» կոմիտե - Սայաթ-Նովա-Չարենց փողոցների հատման մասում հավաք, 29.10.2004թ., ժ. 12:00-14:00,
- «Քուրդիստան» կոմիտե - Ազատության հրապարակ-Թումանյան-Աբովյան փողոցներ-Հանրապետության հրապարակ երթուղով երթ, 15.02.2005թ., ժ. 13:00-15:00,
- «Քուրդիստան» կոմիտե - Ազատության հրապարակ-Թումանյան-Աբովյան փողոցներ-Հանրապետության հրապարակ երթուղով երթ, 09.11.2005թ., ժ. 12:00-15:00,
- «Քուրդիստան» կոմիտե - Դավիթ Անհաղթ փողոցում գտնվող Երախորհրդի եր–անյան գրասենյակի մոտ հավաք, 08.03.2006թ., ժ. 12:00-15:00,
- «Քուրդիստան» կոմիտե - Ս.Շահումյանի անվան հրապարակ-Վ.Սարգսյան փողոց- ՄԱԿ-ի գրասենյակ երթուղով երթ ՄԱԿ-ի գրասենյակի հարակից տարածքում հանրահավաք, 09.03.2007թ.. ժ.13:00-15:00,
- Հայաստանի քրդական ազգային խորհուրդ - Ս.Շահումյանի անվան հրապարակից մինչ– ՄԱԿ-ի գրասենյակ երթուղով երթ, 21.08.2007թ.,
- «Քուրդիստան» կոմիտե - Ս.Շահումյանի անվան հրապարակից մինչ– ՄԱԿ-ի գրասենյակ երթուղով երթ, 15.11.2007թ., ժ. 13:00-15:00,

- Հայաստանի քրդական ազգային խորհուրդ - Օպերայի հարակից տարածք-Հյուսիսային պողոտա-Հանրապետության հրապարակ կամ Քաղաքապետարանի դիմացից Շահումյանի անվան հրապարակով դեպի Հանրապետության հրապարակ երթուղիներով երթ, 28.10.2008թ. ժ. 13:00-15:00,
- Հայաստանի քրդական ազգային խորհուրդ - Շահումյանի անվան հրապարակում հավաք, 14.08.2009թ. ժ.13:00-14:00,
- «Հարմոնիա» ռուսական մշակութային կազմակերպություն ՎՆ Հայաստանի Հանրապետության անկախության օրվան նվիրված երթ Սարյանի արձանի մոտից մինչ– Հանրապետության հրապարակ՝ Ա.Բաբաջանյանի անվան համերգասրահ երթուղեվ Հայաստանի ազգային փոքրամասնությունների բոլոր համայնքների ներկայացուցիչների մասնակցությամբ, 21.09.09թ., ժ. 12:00-13:00:

Հոդված 8

Կողմերը պարտավորվում են ճանաչել ազգային փոքրամասնության պատկանող յուրաքանչյուր անձի՝ սեփական կրոնը կամ հավատը բացահայտ դավանելու, ինչպես նա– կրոնական հաստատություններ, կազմակերպություններ – ընկերություններ ստեղծելու իրավունքը:

134. 2005թ. փոփոխված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը հստակ սահմանում է իշխանությունների – կրոնական կազմակերպությունների միմյանց գործերին չմիջամտելու սկզբունքը: Մասնավորապես, Սահմանադրության Հոդված 8.1-ում ասվում է. «Հայաստանի Հանրապետությունում եկեղեցին անջատ է պետությունից»: Սահմանադրությունը նախատեսում է պետության – կրոնական տարբեր կազմակերպությունների փոխշահավետ համագործակցություն – գործունեության ազատություն, նշելով «Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է օրենքով սահմանված կարգով գործող բոլոր կրոնական կազմակերպությունների գործունեության ազատությունը :

135. Մի–նույն ժամանակ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը նախատեսում է, որ «Հայաստանի Հանրապետության – Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով»: Ղեկավարվելով Սահմանադրության այս դրույթով՝ 2007թ. փետրվարի 22-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության – Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը : Նշված օրենքն ընդունվել է հաշվի առնելով Հայ առաքելական եկեղեցու պատմական դերը հայ ժողովրդի կյանքում: Մի–նույն ժամանակ պետք է նշել, որ սույն օրենքի դրույթները որ–է կերպ չեն նսեմացնում մյուս կրոնական կազմակերպությունների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ – միջազգային պայմանագրերով սահմանված իրավունքներն ու ազատությունները: Այս քայլով նա– պետությունը փորձում է հատուցել այն վնասը, որ պատճառվել է եկեղեցուն աթեիզմի ռեժիմի տակ գտնված տարիներին:

136. 2009թ. հունվարի 1-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների կողմից ներկայացվեցին առաջարկություններ «Խղճի

ազատության – կրոնական կողմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ – լրացումներ կատարելու մասին – Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին օրենքների վերաբերյալ: Կատարված լրացումների նպատակն էր համապատասխանեցնել նշված օրենքը 2005թ. ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը – մասնավորապես, 26-րդ հոդվածին, որում սահմանված է. «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի – կրոնի ազատության իրավունք: Այս իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը – դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցական արարողությունների – պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը: Այս իրավունքի արտահայտումը կարող է սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հասարակական անվտանգության, առողջության, բարոյականության կամ այլոց իրավունքների – ազատությունների համար»:

137. Նշված լրացումները կար–որ քայլ էին ստանձնած միջազգային պարտավորությունների համաձայն մարդու իրավունքներին վերաբերող երաշխիքները հստակեցնելու – կանոնակարգելու ուղղությամբ: Միջազգային փորձաքննություն անցնելու նպատակով վերոհիշյալ օրենքների փոփոխություններն ուղարկվեցին Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողով – ԵԱՀԿ Ժողովրդական հաստատությունների – մարդու իրավունքների գրասենյակ՝ համատեղ կարծիքի, որը ընդունվել է 2009թ. հունիսի 23-ին:

138. Կրոնական բազմազանության պայմաններում հայերի մեծամասնությունը, ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, ազգային՝ Հայ առաքելական եկեղեցու անվանական հետ–որդներ են: Չնայած իր գերակայող դրությանը, Հայ առաքելական եկեղեցին հիմնականում ըմբռնումով է վերաբերվում այլ կրոնական դավանանքներին, առանձնապես ազգային փոքրամասնություններին – նրանց ազգային կրոններին:

139. Անկախությունից հետո անցած տարիներին Հայաստանը լուրջ քայլեր է ձեռնարկել երկրում կրոնական բազմազանությունն ապահովելու ուղղությամբ: Եթե 1997թ. երկրի պետական ռեգիստրում գրանցված էին 14 կրոնական կազմակերպություններ, ապա 2009թ. դրությամբ Հայաստանում գրանցված են 13 կրոնական հոսանքներ ներկայացնող 66 հասարակական կազմակերպություններ: Հայաստանի Հանրապետության կրոնական ազգային փոքրամասնությունների կրոնական կազմակերպություններն են.

- «Ռուս Ուղղափառ Եկեղեցու Եր–ան քաղաքի Ս. Տիրամոր եկեղեցու ուղղափառ համայնք»,
- «Ռուս Ուղղափառ Եկեղեցու Գյումրի քաղաքի Ս. Նիկոլայ Հրաշագործի եկեղեցու ուղղափառ համայնք»,
- «Ռուս Ուղղափառ Եկեղեցու Վանաձոր քաղաքի Ս. Աստվածածնի Ծննդյան եկեղեցու ուղղափառ համայնք»,
- «Ռուս Ուղղափառ Եկեղեցու Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Դիմիտրով գյուղի Կիրիկ – Իուլիտա Սբ. Նահատակների եկեղեցու ուղղափառ համայնք»,
- «Հայաստանի Եզդիների (Շարֆադինի) հետ–որդներ կրոնական կազմակերպություն»,
- «Հայաստանի Հանրապետության Եզդիների Ազգային ՀՇԵխի Շեխու ԲաքրաեՄՆ համայնք»,

- «Հայաստանի Հրեական կրոնական համայնք»,
- «Ար–ելքի ասորական կաթողիկոսության սուրբ առաքելական եկեղեցի» Հայաստանի ասորական կրոնական կազմակերպություն:

140. Եր–անում անարգել գործում է նա– պարսկական Կապույտ մզկիթը: Առանց պետական գրանցման գործում են նա– Լոռու մարզում գտնվող մոլոկանների երկու համայնքները՝ Ֆիոլետովո – Լերմոնտովո գյուղերում: Նրանք կամովին հրաժարվում են գրանցվել, իսկ պետությունը չի պարտադրում: Գործում է նա– վրացական եկեղեցին, որին պաշտամունքային արարողություններ իրականացնելու համար տարածք է հատկացրել Հայաստանյայց առաքելական եկեղեցին:

141. Պետական կառույցների – կրոնական կազմակերպությունների միջ– հարաբերություններն օրենսդրությամբ սահմանված կարգով համակարգում է Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմը՝ ազգային փոքրամասնությունների – կրոնի հարցերի վարչության միջոցով: Վարչությունը լայնածավալ աշխատանք է տանում մարդկանց – խմբերի կրոնական իրավունքների իրագեկման ուղղությամբ, արձագանքում է կրոնական կազմակերպությունների կողմից բարձրացվող հարցերին, օժանդակում դրանց լուծմանը, կազմակերպում է քննարկումներ – համաժողովներ:

142. Բոլոր կրոնների – նրանց արժեքային համակարգերի հանդեպ հանդուրժողականության – հարգանքի ձ–ավորման նպատակով Ազգային փոքրամասնությունների – կրոնի հարցերի վարչության կողմից կազմակերպվում են ամենամյա քննարկումներ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր կրոնական համայնքների մասնակցությամբ, որոնց հիմնական շեշտադրումը բոլոր կրոնական համայնքների միջ– բարյացակամ հարաբերությունների ձ–ավորումն է:

143. Նկատի ունենալով, որ հանդուրժողականության – հարգանքի հիմքում փոխճանաչողությունն է, Հայաստանում հրապարակվել է տարբեր կրոններին նվիրված գրականություն: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության – ազգագրության ինստիտուտի կողմից 2006թ. հրապարակվել է Ա.Ավդալի «Եզդի քրդերի հավատալիքները» աշխատությունը: Հրապարակվել է Եզդիական կրոնական բնագրերի ժողովածու՝ Գ. Ասատրյանի խմբագրությամբ: 2006թ. հայերեն է թարգմանվել – հրատարակվել Ղուրանը (թարգմանության հեղինակ Էդվարդ Հախվերդյան): Վ.Առաքելովայի հեղինակությամբ հրապարակվել է «Շիիզմի հիմունքները» աշխատությունը (Եր–ան, 1997թ.): Եր–անի պետական համալսարանի Աստվածաբանության ֆակուլտետի կողմից Վ.Խաչատրյանի հեղինակությամբ հրատարակվել է «Իսլամ» աշխատությունը (Եր–ան, 2007թ.): Հրապարակվել է Ա. Հակոբյանի, «Դասական ասորերեն» աշխատությունը 2005թ.: Տվյալ հրապարակումը ասորերենի՝ Մերձավոր Ար–ելքի հնագույն – քրիստոնեության կար–որագույն լեզուներից մեկին նվիրված առաջին հայալեզու դասագիրքն է:

144. Հայաստանի Հանրապետությունում պետական պաշտպանության տակ են առնված Հայաստանի Հանրապետության տարածքի բոլոր պատմաճարտարապետական, մշակութային – կրոնական կառույցները, անկախ դրանց էթնիկ կամ կրոնական պատկանելությունից: Հայ առաքելական եկեղեցու պատմական հուշարձաններից բացի (օրինակ՝ հեթանոսական տաճար, քաղկեդոնիկ եկեղեցիներ – այլն) այս պահին Հայաստանի տարածքում առկա –

արդեն բացակայող կրոնական ու էթնիկ համայնքների պատմական պաշտամունքային օջախներից՝ Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության պատմության – մշակույթի հուշարձանների պահպանության գործակալության տվյալներով, պետության կողմից պաշտպանվում են հետ–յալ հուշարձանները.

- Հայ կաթոլիկ եկեղեցի Գյումրիում, կառուցված 1848-1855թթ. Կանոնիկոս վարդապետ Արարատյանի կողմից,
- Ռուսական եկեղեցի Վանաձորում, կառուցված 1895թ., վերանորոգված 1977թ.,
- Ռուսական եկեղեցի Գյումրիում (Պլպլան ժամ), կառուցված 1904թ.,
- Ռուսական եկեղեցի Եր–անում, կառուցված 1913թ.,
